


**(ՀԱԿԱ-) ՅԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ  
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ԱՊԱՅՈՒՅՑ  
ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**



### **Այս հետազոտության մասին**

Սույն հետազոտությունը մշակվել է DCAF ժնկյան կենտրոնի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժնի կողմից: DCAF ժնկյան կենտրոնը շնորհակալություն է հայտնում Շվեյցարիայի համադաշնության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության և սպորտի դաշնային դեպարտամենտին և Նորվեգիայի արտաքին գործերի նախարարությանը՝ սույն հրապարակումը հնարավոր դարձնելուն ուղղված առատաձեռն աջակցության համար:

### **DCAF-ի մասին**

DCAF Անվտանգության ոլորտի կառավարման ժնկյան կենտրոնը հավատարիմ է պետությունների և ժողովուրդների անվտանգության բարելավման գործընթացին ժողովրդավարական կառավարման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և գենդերային հավասարության շրջանակներում: 2000 թվականին հիմնադրումից ի վեր DCAF-ը նպաստել է խաղաղության և զարգացման կայունությանը՝ օժանդակելով գործընկեր պետություններին և նրանց աջակցող միջազգային կազմակերպություններին անվտանգության ոլորտի կառավարումը ներառական և մասնակցային բարեփոխումների միջոցով բարելավելու նպատակով: DCAF-ը ստեղծում է նորարարական կրթական նյութեր, խթանում է նորմերը և դրական փորձը, տրամադրում է իրավական և քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն և աջակցում է անվտանգության ոլորտում ներգրավված պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի կարողությունների բարձրացմանը:

### **Յեղինակային իրավունքներ**

Տպագրվել է Շվեյցարիայում 2021 թվականին Անվտանգության ոլորտի կառավարման ժնկյան կենտրոնի (DCAF) կողմից:

Անվտանգության ոլորտի կառավարման ժնկյան կենտրոն DCAF

Մեզոն դե լա Պե  
Յուժեն-Ռիգո փողոց 2E  
CH-1202 ժնկ, Շվեյցարիա  
Հեռախոս: +41 22 730 94 00  
info@dcaf.ch  
www.dcaf.ch  
Twitter @DCAF\_Geneva

Մեջբերել որպես. Անվտանգության ոլորտի կառավարման ժնկյան կենտրոնի (DCAF) 2021 թ., (Հակա-) հետախուզական տեղեկությունների՝ դատարանում որպես ապացույց ընդունելիությունը: (ժնկ, DCAF):

### **Ծանոթություն**

Սույն հետազոտության մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և չեն արտացոլում Շվեյցարիայի համադաշնության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության և սպորտի դաշնային դեպարտամենտի և Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության կարծիքները կամ տեսակետները: DCAF-ը խրախուսում է սույն հետազոտության օգտագործումը, թարգմանությունը և տարածումը: Սակայն խնդրում ենք ընդունել հեղինակային իրավունքները և մեջբերել նյութերը՝ չփոփոխելով բովանդակությունը:

Խմբագիր՝ Ալեսանդրա Ալեն  
Յեղինակ՝ Անդրեյ Բոգիսլովսկի  
Ձևավորում և էջադրում՝ DTP Studio  
ISBN: 978-92-9222-687-9

## **Բովանդակություն**

|  |    |
|--|----|
| Ներածություն .....   | 3  |
| 1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի չափորոշիչները<br>և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի<br>արդարադատական համակարգը .....  | 4  |
| 2. Եվրոպական արդարադատության դատարանի չափանիշները<br>և իրավասությունները .....   | 6  |
| 3. Զեռախուզության հավաքած ապացույցների օգտագործումը<br>Եվրոպայում. ազգային անվտանգության գործեր, դատական<br>գնահատում, ապացույցներին վերաբերող կանոններ և<br>ընթացակարգային երաշխիքներ ..... | 7  |
| 3.1. Զեռախուզության հավաքած ապացույցների օգտագործումը<br>դատարանում .....  | 8  |
| 3.2. Տարբեր երկրների փորձը.....  | 9  |
| Վերջաբան .....   | 23 |

## Հապավումների ցանկ

|      |  |
|------|--|
| ԵՄ   | Եվրոպական միություն                                |
| ՄԻԵԿ | Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա            |
| ԵԱԴ  | Եվրոպական արդարադատության դատարան                  |
| ՄԻԵԴ | Մարդու իրավունքների եվրոպական դատարան              |
| ԱՅԾԱ | Արտաքին հետախուզական ծառայությունների ակտ          |
| ԴՏԸԱ | Դասակարգված տեղեկատվության ընթացակարգերի մասին ակտ |
| ՆԴՀՀ | Ներգաղթի դիմումների հատուկ հանձնաժողով             |

## Ներածություն

Անվտանգության համաշխարհային մարտահրավերները, ինչպիսիք են, օրինակ, ահաբեկչության դեմ պայքարը, կիբեռ-անվտանգությունը, զանգվածային ոչնչացման զենքերի տարածման դեմ պայքարը, կազմակերպված հանցավորությունը, կոռուպցիան և թմրանյութերի թրաֆիքինգը, ձևափոխել են քրեական արդարադատության նպատակները, բնույթը և գործիքները: Պետություններն ընդունել են օրենքի գերակայության սկզբունքների վրա հիմնված միջոցներ, որոնք թույլ են տալիս քննիչներին և դատախազներին որպես ապացույց օգտագործել հետախուզության և օրինապահ մարմինների հավաքած տեղեկությունները դատական գործերի ընթացքում այնպիսի եղանակով, որը ոչ միայն ապահովում է աղբյուրների և հավաքման մեթոդների պաշտպանությունը, այլ նաև պաշտպանվող կողմի՝ արդար դատավարության իրավունքը՝ որպես ընթացակարգային հիմնական երաշխիք: Եվրոպական միության (ԵՄ) երկրների մեծ մասում հետախուզության ծառայությունների հավաքած ապացույցները (այսուհետ՝ հետախուզության հավաքած ապացույցներ) օգտագործվում են դատական գործերի քննության ընթացքում պարզապես որպես ընդհանուր տեղեկություններ: Ընդհանուր կամ ուղղորդիչ տեղեկությունները սահմանվում են որպես տեղեկություն, որը հետախուզության ծառայությունները տրամադրում են իրավապահ մարմիններին, կամ հետախուզության ծառայություններից ստացված տեղեկություն, որը կարող է հիմք ծառայել ոստիկանության կողմից անկախ քննություն սկսելու համար: Այն նաև անվանվում է հետախուզական աղբյուրներից ստացված տեղեկություն, որն օգտագործվում է միայն «ուղղորդիչ նպատակներով»: Այս տեղեկությունները կարող են օգտագործվել անկախ քննություն (գործ) սկսելու համար կամ որպես հատուկ տեղեկություն (Իսպանիայում)<sup>1</sup>, սակայն չեն կարող օգտագործվել որպես ապացույց դատավարության ժամանակ: Այսպիսի տեղեկությունները չեն կարող ծառայել որպես ստանդարտ կամ հիմնական ապացույց<sup>2</sup> կամ որպես միակ ապացույց, որի հիման վրա դատարանը կայացնում է իր որոշումը: Հատկանշական է, որ Ավստրալիայի, Իտալիայի և Խորվաթիայի օրենսդրություններում առկա է հստակ տարանջատում հետախուզության ծառայությունների և դրանց իրավասությունների և իրավապահ մարմինների և դրանց իրավասությունների միջև:

Մյուս կողմից Միացյալ Թագավորությունը և Նիդերլանդները հետևում են մեկ այլ մոտեցման, և նրանց ընթացակարգային օրենսդրությունը թույլ է տալիս քրեական դատավարության ընթացքում ուղղակիորեն օգտագործել այսպիսի ապացույցները և ներառում է հատուկ ընթացակարգեր (Միացյալ Թագավորությունում), որոնք վերաբերում են հետախուզական ծառայությունների հավաքած ապացույցների օգտագործմանը դատարանում: Այս բազմազանության հետևանքով Եվրոպայում անհրաժեշտ է միասնական և համաձայնեցված մոտեցում՝ իրավապահ մարմինների և հետախուզական ծառայությունների համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը հեշտացնելու համար: Քրեական արդարադատության համատեքստում այսպիսի տեղեկատվությունը կարող է կիրառվել որպես սկզբնական խթան ահաբեկչական գործողությունների, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի և հանրային կարգի խաթարմանն ուղղված այլ փորձերի վերաբերյալ հետաքննություններ սկսելու համար՝

<sup>1</sup> «Հատուկ տեղեկություններ» տերմինը մշակվել է Իսպանիայի Գերագույն դատարանի կողմից 2001 թվականին ահաբեկչությանն առնչվող մի գործի քննության ժամանակ (STS 2084/2001), որն իր ազդեցությունն ունեցավ դատարանի կողմից ապացույցների նկատմամբ կիրառվող սկզբունքների վրա: Դատարանը հայտարարեց, որ Զաղաքացիական գվարդիայի անդամների ներկայացրած զեկույցները կարող են համարվել հետախուզության զեկույցներ և դասակարգվել որպես «փորձագիտական հետախուզական ապացույց», այլ ոչ վկայության ապացույց: Սակայն այս մոտեցումը դադարեցվեց 2005 թվականին նման մի գործի քննության ժամանակ (STS 1029/2005): Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս <http://www.poderjudicial.es/search/index.jsp> հղումով:

<sup>2</sup> Հիմնական կամ գլխավոր է կոչվում (այդպես է կոչվում Համագործակցության երկրների իրավագիտության մեջ) այն ապացույցը, որը ներկայացվում է դատարանին՝ ապացուցելու համար քննվող հարցը, օրինակ՝ վկաների ցուցմունքներ, փաստաթղթեր, նյութական ապացույցներ:

միևնույն ժամանակ պահպանելով անձնական գաղտնիության և անվտանգության միջև հավասարակշռությունը:

Այս հարցի բարդությամբ պայմանավորված՝ թեմատիկ ամփոփաթեթն ուղղված է ներկայացնելու հետախուզական ծառայությունների ստացած ապացույցների ընդունելիության, դրանց կիրառման և գործնական հետևանքների համեմատական գնահատում եվրոպական և միջազգային դրական փորձի, ինչպես նաև Եվրոպայի արդարադատության դատարանի (ԵԱԴ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) արդարադատության և մարդու իրավունքների կիրառելի չափորոշիչների վերլուծության միջոցով: Ավելին՝ ամփոփաթեթը ցույց է տալիս, որ հետախուզական ծառայությունների միջոցով ստացված ապացույցները միշտ չէ, որ համարվում են անընդունելի, և ի վերջո ցույց է տալիս, որ այդպիսի ապացույցները կարող են որպես խթան ծառայել հետաքննություններ սկսելու համար կամ աջակցել ընթացիկ հետաքննություններին՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով ոչ միայն ազգային անվտանգության նկատառումները, այլև պաշտպանվող կողմի՝ արդար դատավարության իրավունքը:

Սույն ամփոփաթեթը բաղկացած է երեք բաժիններից: Առաջին բաժնում ներկայացված են ՄԻԵԴ և ԵՄ ԵԱԴ չափանիշներն ու սկզբունքները: Երկրորդ բաժնում վերլուծվում է հետախուզության հավաքած ապացույցների օգտագործումը Եվրոպայում, ներառյալ ազգային անվտանգությանն առնչվող դեպքերը, դատական գնահատումները, ապացույցներին վերաբերող կանոնները և ընթացակարգային երաշխիքները: Այն ցույց է տալիս, թե ինչպես հետախուզական ծառայությունների հավաքած ապացույցները կարող են ընդունելի լինել դատարաններում «համաչափության սկզբունքի» կիրառման միջոցով և Նիդերլանդների, ՄԹ և մի քանի այլ երկրների օրինակներով ներկայացնում է դրական փորձը: Այն ներկայացնում է ԱՄՆ օրենսդրության և արդարադատության մեջ հետախուզության հավաքած ապացույցների գործածումը, հետախուզական և իրավապահ մարմինների ինտեգրված և համակարգված մոտեցումը ահաբեկչության և կազմակերպված հանցավորության կանխարգելմանն ուղղված գործողություններին, ինչպես նաև Արտաքին հետախուզական ծառայության մասին ակտի (ԱՐԾԱ/FISA) և Դասակարգված տեղեկատվության ընթացակարգերի մասին ակտի (ԴՏԸԱ/CIPA) կիրառմամբ հավաքված ապացույցների՝ դատարանում օգտագործման հետևանքները: Վերջաբանում ամփոփվում է սույն ամփոփաթեթում ներկայացված հետախուզության հավաքած ապացույցների կիրառման և գործածման վերլուծությունը և ներկայացվում է այդպիսի ապացույցների՝ դատավարության ընթացքում օգտագործման վերաբերյալ դրական փորձը:

## **1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի չափորոշիչները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արդարադատական համակարգը**

Ստրասբուրգում գտնվող ՄԻԵԴ-ը գործ ունի մի շարք խնդիրների հետ, որոնք ազդում են ազգային անվտանգության, հետախուզության կողմից իրականացվող հսկողության դեպքերում մարդու իրավունքների վերաբերյալ հարցերին առնչվող հարաբերությունների վրա: Մինչ ազգային անվտանգության գաղափարը համապարփակ կերպով չի սահմանվել, եվրոպական նախադեպային իրավունքը այդ սահմանմանը որոշակի բովանդակություն է հաղորդում՝ սկսելով նրանից, որ «այն միանշանակորեն ներառում է պետական անվտանգության և սահմանադրական ժողովրդավարության պաշտպանությունը լրտեսությունից, ահաբեկչությունից, ահաբեկչության աջակցությունից, անջատողականությունից և ռազմական կարգապահության խախտման խթանումից»<sup>3</sup>: Դատարանը պահանջում է հետահայաց գնահատում, թե արդյոք պետության՝ ազգային անվտանգության

<sup>3</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013 թ., Ազգային անվտանգությունը և եվրոպական նախադեպային իրավունքը, Եվրոպայի խորհրդի հետազոտությունների բաժին, հասանելի է <https://rm.coe.int/168067d214> հղումով:

հիմքով մարդու իրավունքները խախտող գործողությունները համապատասխանում են ՄԻԵԿ-ին<sup>4</sup>: Գործողությունների օրինականությունը որոշելու համար պետք է կիրառվեն երեք հիմնական չափանիշներ.

- գնահատում, թե արդյոք պետության իրականացրած գործողություններն **օրինական են, և ազգային օրենսդրության որակի** գնահատում,
- գնահատում, թե արդյոք այդ գործողություններն **անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում**, և արդյոք դրանք համապատասխանում են **համաչափության սկզբունքին**,
- գնահատում, թե արդյոք առկա են գործուն **օրինական միջոցներ և դատական վերահսկողություն**:

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի չափանիշներում ներկայացված են արդար դատավարության իրավունքի մանրամասները, ներառյալ անկախ և անկողմնակալ դատարանի առջև խելամիտ ժամկետներում հանրային դատավարության իրավունքը, անմեղության կանխավարկածը և այլ նվազագույն ընթացակարգային իրավունքներ, ինչպիսիք են պաշտպանության իրավունքը, պաշտպանության նախապատրաստության համար անհրաժեշտ բավարար ժամանակը և հարմարությունները, իրավական ներկայացվածության, գրավոր և բանավոր թարգմանության հասանելիությունը, ինչպես նաև ապացույցների վերաբերյալ հարցեր տալու և վկաներին հարցաքննելու կարողությունը: Դատարանը, սակայն, չի կարող որոշել ընդունելի ապացույցների տեսակը, քանի որ պետություններն ունեն ընտրության հայեցողություն հետախուզական ծառայությունների հավաքած ապացույցների և դրանց ընդունելիության, ինչպես նաև այդ ապացույցների գնահատման վերաբերյալ օրենքներ մշակելիս<sup>5</sup>: Ավելի կոնկրետ, հետախուզության հավաքած ապացույցների համատեքստում միշտ չէ, որ հետախուզության պաշտոնյաների վկայություններն անընդունելի են որպես ապացույց: Դատարանը սահմանում է նաև, որ ահաբեկչության դեմ պայքարի դեպքում պաշտպանյալների իրավունքների նկատմամբ կարող են կիրառվել որոշակի սահմանափակումներ: Դորսոնն ընդդեմ Նիդերլանդների գործում դատարանը վճռեց, որ անանուն վկաների օգտագործումը համոզմունք սահմանելու հարցում «բոլոր հանգամանքներում անհամատեղելի չէ Կոնվենցիայի հետ», քանի որ անանուն վկան կարող է լինել հետախուզության պաշտոնյա, որը գործում է զաղտնի պայմաններում, և նրա ինքնության բացահայտումը կարող է վտանգ ներկայացնել նրա կամ նրա ընտանիքի համար, ինչպես նաև խաթարել նրա օգտակարությունը հետագա գործողությունների համար<sup>6</sup>: Այս բացառությունները կարող են կիրառվել միայն ահաբեկչության դեմ պայքարի դեպքերի համար, երբ դրանք «խստորեն համաչափ են

<sup>4</sup> Պետության կողմից մարդու իրավունքների հարցում միջամտության չափանիշները բացատրել է դատավոր և Սլովենիայի նախկին արդարադատության նախարար Ալեշ Չալարը DCAF-ի կազմակերպած Յակախետախուզության տեղեկությունների՝ դատարաններում որպես ապացույց կիրառման ընդունելիության վերաբերյալ ռազմավարական խորհրդակցության ժամանակ: Նա նաև շեշտել է ընդլայնված դատական վերահսկողության խնդիրը և հետախուզական ծառայությունների հավաքած ապացույցների գործածությունը կարգավորող ազգային օրենսդրության համապատասխանեցման կարիքը:

<sup>5</sup> Տե՛ս Յենոխայն ընդդեմ Միացյալ Թագավորության, 7 դեկտեմբերի, 1976 թ., դիմում No. 5493/72, շարք A, No 24, էջ 17, պարբերություն 48: Անանուն վկաների վկայության վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների, 20 նոյեմբերի, 1989 թ., դիմում No 11454/85, շարք A, No 166, պարբերություն 42:

<sup>6</sup> Տե՛ս Դորսոնն ընդդեմ Նիդերլանդների, 26 մարտի, 1996 թ., դիմում No. 20524/92, Վճիռների և որոշումների զեկույց, 1996-II, պարբերություն 69: Տե՛ս նաև Ա. և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, 19 փետրվարի, 2009 թ., դիմում No. 3455/05, Վճիռների և որոշումների զեկույց, 2009, պարբերություն 231, որտեղ ՄԻԵԿ-ը սահմանում է, որ «փակ կյուրթերի օգտագործումը հանգեցրել է 6-րդ հոդվածի խախտման»: Այստեղ ազգային մակարդակով դատավարությունը տեղի է ունեցել Միացյալ Թագավորությունում Իվիգրացիոն հատուկ դիմումների հանձնաժողովի կողմից (SIAC): Դիմորդները պնդում էին, որ ՄԹ-ի կողմից ՄԻԵԿ-ի 5(1)-րդ հոդվածից շեղումը օրինական էր 2001 թ. Ահաբեկչության և հանցավորության դեմ պայքարի և անվտանգության ակտի շրջանակում (ATCSA): Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Զոսթեր վան Վուրհաուս, Չիլլ Ե. Բ., 2006 թ. «Յետախուզական տվյալները որպես օրինական ապացույց. Անգլիայում և Ուելսում հետախուզության պաշտպանված վկաների վերաբերյալ Նիդերլանդների կողմից առաջարկվող մոտեցման կենսունակության համեմատական քրեական ուսումնասիրությունը և ՄԻԵԿ-ի 6(3)-րդ հոդվածին համապատասխանությունը», Ուտրեխտի իրավաբանական պարբերական, հատոր 2, թողարկում 2, էջ 18-22:

Նպատակին, և պետք է իրականացվեն փոխհատուցող միջոցներ մեղադրյալի շահերի պաշտպանության համար, որպեսզի ապահովվի դատավարության արդարությունը և երաշխավորվի, որ ընթացակարգային իրավունքները չեն իմաստագրվում»<sup>7</sup>: Որոշ ապացույցների գաղտնիությունը պետք է հակակշռվի ազգային դատական մարմինների կողմից կիրառվող ընթացակարգերով: Այս ընթացակարգերը պետք է լինեն հնարավորինս հավասարակշռված, պահպանեն «գեների հավասարության» սկզբունքը և մշտապես լինեն դատական հսկողության ներքո<sup>8</sup>:

## 2. Եվրոպական արդարադատության դատարանի չափանիշները և իրավասությունները

ԵԱԴ իրավասությունների շրջանակը կենտրոնանում է երկու կարևոր խնդիրների վրա. (1) գաղտնի ապացույցներ ընդունելու հնարավորությունը և (2) գործադիր կողմից հետախուզական գործողությունների պաշտպանության իրավունքի մեջ միջամտության օրինականությունը ԵՄ ահաբեկչության դեմ պայքարի քաղաքականությունների շրջանակներում: Միացյալ Թագավորության Արդարադատության և անվտանգության մասին ակտի մաս կազմող «գաղտնի կյուբերի ընթացակարգը»՝ դիտարկված 22-ն ընդդեմ Ներքին գործերի դեպարտամենտի պետական քարտուղարի գործի տեսանկյունից առաջին խնդրի լավագույն օրինակ է<sup>9</sup>: Այս դեպքում ԵԱԴ-ը մտահոգություն է հայտնել, որ ազգային դատարանը պարտավոր էր «ապահովել, որ ազգային համապատասխան մարմնի կողմից ներգրավված անձին որոշման կայացման հիմքերի մասին [...] ճշգրտորեն և ամբողջությամբ տեղյակ չպահելու և նրան համապատասխան ապացույցները չբացահայտելու հանգամանքը սահմանափակվում է բացառապես անհրաժեշտությամբ, և որ նա ամեն դեպքում տեղեկացված է այդ հիմքերի բնույթի մասին այնպիսի եղանակով, որն ապահովում է տվյալ ապացույցների անհրաժեշտ գաղտնիությունը»: Վճիռը լուծել է Վերաքննիչ դատարանի կայացրած նախնական որոշումը (Անգլիա և Ուելս, Զաղաքացիական բաժին), որը վերաբերում էր ԵՄ քաղաքացուն Միացյալ Թագավորություն մուտք գործելու արգելքի մասին որոշմանը՝ հանրային անվտանգության հիմքերով: Նախկին բողոքարկումը տեղի էր ունեցել Իմիգրացիոն հատուկ դիմումների հանձնաժողովի կողմից, որտեղ Պետական քարտուղարը հղում էր կատարել կյուբերի գաղտնիությանը և դրանց դիտարկմանը որպես «փակ կյուբ»: Այս դեպքի հիման վրա ԵԱԴ-ն ընդունել է նաև դատարանում «գաղտնի ապացույց» ընդունելու ծայրահեղ միջոցը այն դեպքերում, որոնք կապված են «ազգային անվտանգության» նպատակներով հավաքված հետախուզական տվյալների հետ՝ միևնույն ժամանակ շարունակելով հարգել մարդու իրավունքները: Ինչ վերաբերում է երկրորդ խնդրին, ԵԱԴ-ի կողմից քննված կենտրոնական գործ է Զադիի գործը<sup>10</sup> կամ Զադիի եռագրությունը<sup>11</sup>: Դատարանը վճռեց, թե արդյոք Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի

<sup>7</sup> Ռոուլի և Դևիսն ընդդեմ Միացյալ Թագավորության, 16 փետրվարի, 2000 թ., դիմում No. 28901/95, Վճիռների և որոշումների գեկույց, 2000-II, պարբերություն 60-62:

<sup>8</sup> Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության, 16 դեկտեմբերի, 1992 թ., դիմում No. 13071/87, շարք A, No. 247-B, պարբ. 34 և 36, Բրիքմոնտն ընդդեմ Բելգիայի, 7 հուլիսի, 1989 թ., դիմում No. 10857/84, շարք A, No. 158, էջ 31, պարբ. 89, և Ս. Ն-ն ընդդեմ Շվեդիայի, 2 հուլիսի, 2002 թ., դիմում No. 34209/96, Վճիռների և որոշումների գեկույց, 2002-V, պարբ. 44:

<sup>9</sup> Տե՛ս 22-ն ընդդեմ Ներքին գործերի դեպարտամենտի պետքարտուղարի գործը, 4 հունիսի, 2013 թ., C-300/11:

<sup>10</sup> Գործ T-306/01 Յուսուֆ և Ալ Բարաքաթ հիմնադրամն ընդդեմ Խորհրդի և Գործ T-315/01 Զադին ընդդեմ Խորհրդի և հանձնաժողովի, 21 սեպտեմբերի, 2005 թ.:

<sup>11</sup> Զադին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից նույնականացվել էր որպես Ալ Զալհալա կազմակերպության հնարավոր աջակից և այդ պատճառով ենթարկվել էր պատժամիջոցների, մասնավորապես՝ ակտիվների սառեցման: ԵՄ-ը ՄԱԿ-ի այս պատժամիջոցը փոխակերպել էր որոշման, որի դեմ Զադին հետագայում բողոքել էր ԵՄ դատարաններում: Առաջին ատյանում Ընդհանուր իրավասության դատարանը մերժել էր ԵՄ որոշման վերանայումը, քանի որ նման վերանայումը կենթադրեր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևի վերանայում: Ընդհանուր իրավասության դատարանը, սակայն, քննել էր, թե արդյոք Անվտանգության խորհուրդը հետևել է *jus cogens* կարգավորումներին, մասնավորապես որոշակի հիմնարար իրավունքների պահանջներին, սակայն չէր գտել այդ սկզբունքների խախտում:



բանաձևը պետք է գերակայություն ունենա ԵՄ օրենքների նկատմամբ: Այս գործը կարևոր է, քանի որ չնայած քննադատությանը՝ դատարանը թույլ է տալիս, որ Անվտանգության խորհրդի միջոցառումները գերակայություն ունենան ԵՄ օրենքների նկատմամբ միայն այն դեպքերում, երբ սահմանվել են մարդու իրավունքների համապատասխան բավարար երաշխիքներ: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ ԵԱԴ-ը գտավ պատշաճ հավասարակշռությունը ԵՄ Հիմնարար իրավունքների խարտիայի սահմանադրական հիմնական սկզբունքների և ահաբեկչության դեմ պայքարի միջազգային արդյունավետ միջոցառումների միջև: Ավելին՝ Զադիի գործին հաջորդած զարգացումները վերահաստատեցին գործուն դատական պաշտպանության կարևորությունը որպես ԵՄ կարևորագույն սկզբունք:

Այս գործի կարևորությունը հիմնված է անձի հիմնարար իրավունքների մասին ԵԱԴ-ի դիրքորոշման և Եվրոպական դատարաններում «հետախուզական տվյալների» օգտագործման վերաբերյալ վերազգային չափանիշների մշակման վրա, ինչը ցույց է տալիս, որ անկախ միջազգային պարտավորություններից՝ հիմնարար իրավունքների վերաբերյալ հարգանքն ընկած է ԵՄ իրավական համակարգի հիմքերում, ներառյալ Եվրոպական միության Համաձայնագրի 6-րդ հոդվածը և ԵՄ Կանոնադրությունը:

### **3. Հետախուզության հավաքած ապացույցների օգտագործումը Եվրոպայում. ազգային անվտանգության գործեր, դատական գնահատում, ապացույցներին վերաբերող կանոններ և ընթացակարգային երաշխիքներ**

Եվրոպայի երկրների մեծ մասում առկա է հստակ տարանջատում քրեական իրավապահության և հետախուզության տվյալների հավաքման միջև: Օրենքով հետախուզական գործակալություններն ունեն խիստ սահմանափակ իրավասություններ և մանրամասնորեն սահմանված պարտավորություններ և պատասխանատվություններ: Դրանք խստորեն տարանջատված են իրավապահ մարմիններից, և նրանց հավաքած տեղեկությունները ծառայում են այլ նպատակների՝ ազգային անվտանգության պաշտպանությանը: Հատկանշական է, որ որոշ Եվրոպական հետախուզական գործակալություններ, հատկապես ներքին անվտանգության ծառայությունները (օրինակ՝ Լեհաստանում, Դանիայում, Իռլանդիայում և Լատվիայում) ունեն իրավապահ իրավասություններ, հատկապես այսպես կոչված պետության դեմ ուղղված հանցագործությունների կամ ազգային անվտանգության դեմ ուղղված հացագործությունների դեպքում (ինչպիսիք են, օրինակ, լրտեսությունը, դիվերսիոն գործողությունները, ահաբեկչությունը կամ դասակարգված տեղեկատվության բացահայտումը): Այս երկրներում նման հարցերին վերաբերող հետախուզական տեղեկությունները այլ «սովորական» իրավապահ մարմիններին փոխանցելը (օրինակ՝ ոստիկանությանը կամ հանրային դատախազությանը) քրեական հետապնդում սկսելու կամ այդ տեղեկությունը դատավարության ընթացքում օգտագործելու համար շատ դժվար է՝ համեմատած Միացյալ Նահանգների, Միացյալ Թագավորության կամ Նիդերլանդների հետ: Նույնիսկ նախադեպային իրավունքի վրա հիմնված համակարգեր ունեցող երկրները սահմանում են հետախուզության հավաքած տեղեկությունների՝ դատարանում օգտագործելու ընթացակարգերը: Եվրոպայում ՄԻԵԴ-ի դիմադրությունը՝ սահմանել ապացույցներին առնչվող ավելի խիստ կանոններ, մասամբ կապված է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև առկա տարբերությունների հետ, որոնք վերաբերում են քրեական գործերում ապացույցների կարգավորմանը<sup>12</sup>:

<sup>12</sup> Տե՛ս Չ. Բենթամ, 1988 թ. (1781): Բարոյականության և օրենսդրության սկզբունքներ, Ամհերսթ, Լյու Յորք, Պրոմեթեոս Բուքս, Չ. Բենթամ, 1837 թ., Դատական ընթացակարգերի սկզբունքները, Ջերեմի Բենթամի գործերի հավաքածու, հատոր 2, Չ. Բենթամ, 1827 թ., Դատական ապացույցների հիմնավորումը, Ջերեմի Բենթամի գործերի հավաքածու, հատոր 6:

### 3.1. Հետախուզության հավաքած ապացույցների օգտագործումը դատարանում

Հետախուզության հավաքած ապացույցների՝ դատարանում օգտագործումը կարգավորելու համար երկրներն օգտագործում են տարբեր մոդելներ: Առաջին մոդելի դեպքում երկրները<sup>13</sup> փոփոխել են իրենց քրեական դատավարության ընթացակարգերը՝ ընդլայնելով դասական քրեական հետաքննության շրջանակները և ավելացնելով «նախաձեռնողական քրեական հետաքննությունը», որը ներառում է հետախուզական տեղեկությունների օգտագործումը հետաքննությունն սկսելու նպատակով<sup>14</sup>: Այս հետաքննությունների նպատակը լուրջ հանցագործությունների նախապատրաստման կամ իրականացման կանխարգելումը և որևէ կազմակերպության և/կամ դրա անդամների դեմ քրեական հետաքննություն սկսելու ապահովումն են: Այս բարեփոխումների արդյունքում սովորական իրավապահ մարմինների մանդատը և իրավասությունները փոփոխվել են՝ նրանց դարձնելով ավելի նախաձեռնողական (հանցավորության բարձր մակարդակին ի պատասխան ավելի շատ կանխարգելիչ հետաքննությունների իրականացում) և ավելի քիչ արձագանքող (կատարված հանցագործությունների վերաբերյալ ավելի քիչ հետաքննությունների իրականացում)՝ որոշակի հարկադրանքի միջոցների ավելի լայն օգտագործմամբ, ինչպիսիք են հատուկ հետաքննական միջոցները, որոնք դեռևս պահանջում են դատարանի կողմից նախնական թույլտվություն:

Երկրորդ մոդելն օգտագործող երկրներում<sup>15</sup> հետախուզության բարեփոխումները հանգեցրել են հետախուզական ծառայությունների մանդատի և իրավասությունների փոփոխության: Այս մոդելը նպատակ ունի հետախուզական գործակալություններին ընդգրկելու իրավապահ մարմինների կողմից անցկացվող նախնական հետաքննության շրջանակներում՝ հատուկ հանրային դատախազության իրավասության ներքո: Այս մոտեցումը թույլ է տալիս հետախուզական գործակալություններին իրականացնել հարկադրանքի միջոցներ այնպես, ինչպես դրանք կարող են օգտագործվել իրավապահ մարմինների կողմից քրեական դատավարության ընթացակարգերի և ոստիկանության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքների շրջանակներում՝ այդպիսով փոփոխելով նրանց բնույթը և իրավասությունները: Այս համատեքստում նրանք իրավասու են հավաքել տեղեկություններ և օգտագործել քրեական ընթացակարգերին առնչվող որոշակի հարկադրանքի միջոցներ՝ հանցագործության նախապատրաստումը կամ իրականացումը կանխելու նպատակով:

Հունգարիան այս մոդելն օգտագործող երկրներից մեկն է: Այն ընդլայնել է Հանրային դատախազության իրավասությունները՝ թույլ տալով այս մարմինն օգտագործել գաղտնի ծառայությունները և իրավապահ մարմինները (ոստիկանություն, մաքսային ծառայություն և ռազմական ոստիկանություն)՝ տեղեկություններ հավաքելու նպատակով: Տեղեկատվության գաղտնի հավաքումն իրականացվում է երկու տարբեր ռեժիմներով: Առաջին ռեժիմը չի պահանջում օրդերի ստացում և ներառում է իրազեկիչների և գաղտնի գործակալների օգտագործում, անձանց և տարածքների ընդհանուր հսկողություն և գաղտնալսման որոշակի տեսակներ:

Երկրորդ ռեժիմի դեպքում պահանջվում է օրդեր կամ արդարադատության նախարարի կողմից տրամադրված թույլտվություն: Այս ռեժիմը ներառում է հսկողության, մասնավոր տանը խուզարկության և հեռահաղորդակցությունների գաղտնալսման իրականացում: Գաղտնի տեղեկությունները կարող են շարունակաբար հավաքվել մինչև դատական քննության սկսվելը: Այն բանից հետո, երբ սկսվում է դատական քննությունը, դատական մարմինները կարող են գաղտնի կերպով հավաքել տեղեկություններ՝ իրականացնելով հեռահաղորդակցությունների գաղտնալսում, խուզարկություններ և

<sup>13</sup> Ավստրիա, Դանիա, Գերմանիա, Սլովենիա, Սերբիա և Իսպանիա:

<sup>14</sup> Նախաձեռնողական քրեական հետաքննությունն արձագանքում է մի իրավիճակի, որը բացառում է որևէ հաստատված ցուցում իրականացված կամ իրականացվելիք հանցագործության խելամիտ կասկածի նկատմամբ, և որում չկան կասկածյալներ:

<sup>15</sup> Հունգարիա, Շվեդիա, Բելգիա և Իտալիա:

այլն: Սակայն միջոցների երկու տեսակներն էլ պահանջում են դատարանի օրդեր<sup>16</sup>: Երրորդ մոդելի դեպքում, որը կիրառվում է Միացյալ Նահանգներում, Բելգիայում, Միացյալ Թագավորությունում և Նիդերլանդներում, իրավապահ մարմինների և հետախուզական գործակալությունների իրավասությունները մասամբ համընկնում են: Սա վերաբերում է հետախուզության և իրավապահ համայնքների միջև տեղեկատվության ազատ շրջանառությանը կամ իրավապահ մարմինների և հետախուզական համայնքի միջև տեղեկատվության փոխանակմանը երկու ուղղություններով՝ կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեպքերին առնչվող ոստիկանական հետաքննություններ սկսելու համար: Տեղեկատվության այսպիսի փոխանակումը հեշտացվում է համատեղ տվյալների բազաների ստեղծմամբ (ինչպիսին է, օրինակ, Յակասահաբեկչական տեղեկատվության բազան (CT InfoBox) Նիդերլանդներում և լուրջ հանցագործությունների կամ ահաբեկչության դեմ պայքարող փորձագիտական կենտրոնները՝ l'Organe de coordination pour l'analyse de la menace (OCAM) Բելգիայում, the Nationaal Trainingscentrum (NCT) և Ֆինանսական փորձագիտական կենտրոնը Նիդերլանդներում, ինչպես նաև Ահաբեկչության վերլուծության համատեղ կենտրոնը (JTAC) Միացյալ Թագավորությունում):

Միացյալ Թագավորությունում JTAC կենտրոնը ներգրավված է 2006 թ. Ահաբեկչության վերաբերյալ ակտի պարտադիր նախապատրաստական լուսմների համատեքստում:

Այս երկրներն ունեն ուժեղ և համակարգված հետախուզական համայնքներ՝ առանց հետախուզական համայնքի և սովորական իրավապահ մարմինների (օրինակ՝ ոստիկանությունը) միջև կազմակերպական զգալի տարանջատումների: Օրինակ՝ ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալությունը, Պաշտպանության հետախուզական գործակալությունը և Ազգային հետախուզության գրասենյակը հետախուզական բաժիններ ունեն Պետական քարտուղարությունում, Յետաքննությունների ֆեդերալ բյուրոյում, Գանձապետական դեպարտամենտում, Էներգետիկայի դեպարտամենտում և զինված ուժերում, սակայն միևնույն ժամանակ առկա են խիստ տարանջատումներ այդ մարմինների նպատակների, մեթոդների և վերահսկողության տեսանկյունից:

### 3.2. Տարբեր երկրների փորձը

Ապացույցները կարգավորող կանոնների և ապացույցների ընդունելիության տեսանկյունից որոշ երկրներ ունեն ավելի շատ իրավական խոչընդոտներ, որոնք ազդում են հետախուզության հավաքած ապացույցների՝ դատարանում կիրառելիության վրա: Որոշ երկրներում թույլատրվում է հետախուզության հավաքած ապացույցների՝ դատավարությունների ընթացքում օգտագործումը որպես օրինական ապացույց միայն պաշտպանվող հանրային շահի և պաշտպանվող մարդու իրավունքների համաչափության ստուգումն անցելուց հետո<sup>17</sup>:

**Ավստրիան** հետախուզական ծառայության հավաքած ապացույցների ընդունելիությունը գնահատելիս կիրառում է համաչափության սկզբունքը: Այդուհանդերձ, Ավստրիայի դեպքը ուշագրավ է հետախուզության և իրավապահ մարմինների միջև խոչընդոտների վերացման համատեքստում այնպիսի գործողությունների համար, որոնք կապված են ահաբեկչության կանխարգելման և կազմակերպված հանցավորության

<sup>16</sup> Տե՛ս Մ. Դամսկա, 2001 թ., 'Dokazno pravo u kaznenom postupku: oris novih tendencija, Pravni fakultet u Zagrebu; և Ž. Karas, Neke primjedbe o izdvajanju nezakonitih materijalnih dokaza, Policija i sigurnost', հատոր 21, No. 4, էջ 753-774:

<sup>17</sup> Տե՛ս Ի. Մարտինովիչ, Դ. Զոն, 2016 թ., Nezakoniti dokazi: teorijske i praktične dvojbe u svjetlu prakse Evropskog suda za ljudska prava, Hrvatski ljetopis za kaznene znanosti i praksu, br.2.; I. Bojanić, Z. Đurđević, Dopuštenost uporabe dokaza prib- avljenih kršenjem temeljnih ljudskih prava, Hrvatski ljetopis za kazneno pravo i praksu (Չագրեթ), հատոր 15, broj 2/2008, էջ 973-1003: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Ջ.Ա.Ե. Վերվել, 2005 թ., Ահաբեկչությունը և տեղեկատվության փոխանակումը հետախուզության և իրավապահ մարմինների միջև ԱՄՆ-ում և Նիդերլանդներում. Արտակարգ իրավիճակների քրեական արդարադատություն, Utrecht Law Review, հատոր 1, մաս 1:

հետաքննությունների հետ: Դատավորը կիրառում է համաչափության սկզբունքը՝ հավասարակշռելով տվյալ գործի՝ իրար հակասող շահերը:

Օրինակ՝ կազմակերպված հանցավորության գործերի դեպքում դատավորները հետևում են, որ քրեական հետաքննության շահերը գերակշռեն այլ շահերին, ինչպիսիք են, օրինակ, անձնական կյանքի իրավունքը կամ նման այլ իրավունքներ: Դատավորը թույլ կտա հետախուզական ծառայությունների հավաքած ապացույցների ներկայացումը<sup>18</sup>: Ավստրիական հետախուզական և իրավապահ գործակալությունները հավաքում և մշակում են տեղեկություններ՝ որոշակի նպատակների հասնելու համար (օրինակ՝ կոռուպցիայի կանխարգելումը կամ սահմանադրական հասարակական կարգի պաշտպանությունը): Ավանդաբար հետախուզական գործակալությունները չեն կարող կիրառել քրեական ընթացակարգերում կիրառվող հետաքննչական ստանդարտ ներխուժիչ միջոցներ (օրինակ՝ խուզարկություն կամ բռնագրավում) կամ նոր միջոցներ (օրինակ՝ ներթափանցում): Սակայն նրանք ունեն հսկողություն իրականացնելու իրավասություն և կարող են կիրառել որոշ կանխարգելիչ ներխուժիչ միջոցներ (օրինակ՝ ֆիզիկական խուզարկություններ կամ վտանգավոր առարկաների առգրավում), իսկ լուրջ հանցագործությունների հետաքննությունների ժամանակ (օրինակ՝ կազմակերպված հանցավորության կամ կոռուպցիայի դեպքերում) նրանք կարող են փոխանցել հետախուզական տեղեկությունները իրավապահ մարմիններին, ինչը կարող է օժանդակել հետաքննությանը:

Հետախուզական գործակալության տրամադրած ապացույցի ընդունելիությունն այնուհետև դիտարկվում է դատարանի կողմից՝ կիրառելով «հավասարակշռության կամ համաչափության» սկզբունքը՝ դրա ընդունելիությունը որոշելու համար<sup>19</sup>: Նույնիսկ ահաբեկչության կամ կազմակերպված հանցավորության խմբերի իրականացրած հանցագործություններին առնչվող հետաքննությունների ժամանակ հետախուզության և իրավապահ մարմինների միջև տեղեկությունների փոխանակումը հանգեցնում է նրան, որ հետաքննությունը արձագանքող քրեական հետաքննությունից վերածվում է նախաձեռնողական/կանխարգելիչ հետաքննության՝ ազգային անվտանգության շահերը պաշտպանելու համար:

**Բելգիան** ընդունել է ավելի չափավոր մոտեցում՝ ավելացնելով հետախուզության կողմից իրականացվող հետաքննությունները և համագործակցությունը հետախուզական ծառայությունների և իրավապահ մարմինների միջև՝ օգտագործելով կրկնակի փաստաթղթավորման մոտեցումը: Կրկնակի փաստաթղթավորման փաթեթը ներառում է դասակարգված փաստաթղթերի փաթեթ, որում ներառված են իրավապահ մարմինների կատարած նախաձեռնողական հետաքննությանն առնչվող փաստաթղթերը և չդասակարգված փաթեթը, որը բաց է հանրության համար և ներառում է նախաձեռնողական հետաքննության արդյունքները:

Ի տարբերություն Նիդերլանդների և Իսպանիայի՝ դասակարգված փաստաթղթերի փաթեթը դատարանի կողմից ամբողջական վերահսկողության տակ է և հասանելի է միայն դատարանի համար: Երկրորդ փաթեթը մրցակցային ընթացակարգի մաս է և հասանելի է դատավարության բոլոր կողմերին: Թեև հետաքննության արդյունքները կարող են օգտագործվել որպես ապացույց, դատավճիռը չի կարող կայացվել բացառապես այդ ապացույցների հիման վրա<sup>20</sup>:

<sup>18</sup> Դ. Նովոսել, 2017 թ., Դասակարգված տվյալների օգտագործումը քրեական դատավարություններում. Խորվաթիայի Հանրապետությունում կիրառվող փորձը և մեթոդները, Քրեական արդարադատության և կրիմինոլոգիայի հանդես, No 2, հասանելի է [www.journal.maclc.mk](http://www.journal.maclc.mk) հղումով:

<sup>19</sup> Ավստրիայի քրեական դատավարության օրենսգիրքը, հասանելի է [https://www.legislationline.org/download/id/8549/file/Austria\\_CPC\\_1975\\_am122019\\_de.pdf](https://www.legislationline.org/download/id/8549/file/Austria_CPC_1975_am122019_de.pdf) հղումով (ընթերցվել է 14 հուլիսի, 2021 թ.): ԵՄ հիմնարար իրավունքների գործակալություն, Անմեղության կանխավարկածը, ընթացակարգային իրավունքները քրեական դատավարություններում (ընթերցվել է 14 հուլիսի, 2021 թ.), հասանելի է [https://fra.europa.eu/sites/default/files/fra\\_uploads/belgium-2021-country-re-search-presumption-innocence\\_en.pdf](https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/belgium-2021-country-re-search-presumption-innocence_en.pdf) հղումով:

<sup>20</sup> Ջ.Ա.Ե. Վերվել, 2005 թ., Ահաբեկչությունը և տեղեկատվության փոխանակումը հետախուզության և իրավապահ մարմինների միջև ԱՄՆ-ում և Նիդերլանդներում. Արտակարգ իրավիճակների քրեական

**Խորվաթիայի** քրեական արդարադատության համակարգը նույնպես անցել է լայնածավալ բարեփոխումների միջով՝ հարցաքննային ընթացակարգի մոդելից մրցակցային ընթացակարգի մոդելին: Թեև Խորվաթիայի հետախուզության ծառայությունները չունեն իրավապահ կամ հարկադիր իրավասություններ (ծերբակալելու իրավասություն), նրանք իրավասու են օգտագործել հատուկ միջոցներ տեղեկություններ հավաքելու համար, ինչը երբեմն կոչվում է «հարկադիր միջոցներ» (օրինակ՝ հեռահաղորդակցության գաղտնալսումներ կամ գաղտնի հսկողություն): Նրանց առաջադրանքները ներառում են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության կանխարգելումը, և նրանք իրավասու են իրականացնելու տվյալների գաղտնի հավաքում<sup>21</sup>: Այդուհանդերձ, հետախուզական ծառայությունը պետք է հետևի հատուկ թույլտվության ընթացակարգին, որը սահմանում է Խորվաթիայի Գերագույն դատարանը Անվտանգության և հետախուզության համակարգի մասին օրենքի 33-րդ հոդվածում սահմանված որոշ միջոցների կիրառության համար: Այս միջոցները ներառում են հեռահաղորդակցությունների բովանդակության, փոստային և այլ միջոցների, ինչպես նաև տան ներսի գաղտնի հսկողություն<sup>22</sup>: (Յետախուզական ծառայությունը պարտավոր չէ ստանալ Գերագույն դատարանի օրդեր/թույլտվություն այլ հատուկ հետախուզական միջոցների օգտագործման համար<sup>23</sup>): Օրդերը պետք է տրամադրի Գերագույն դատարանի դատավորը, սակայն նման օրդեր ստանալու համար պահանջվող ստանդարտ ապացույցը հիմնված չէ խելամիտ կասկածի վրա: Յետախուզական գործակալությունը պետք է միայն նշի այն անձանց և/կամ կազմակերպություններին, որոնց նախատեսում է հետևել, հսկողության նպատակը և հսկողության անհրաժեշտ միջոցները<sup>24</sup>:

Դրագոջևիչն ընդդեմ Խորվաթիայի գործը ցույց է տալիս նման միջոցների կիրառման համար մանրազնի դատական վերահսկողության անհրաժեշտությունը:

Յետաքննության դատավորի կողմից թողարկված օրդերը հիմնված էր միայն դատախազության պահանջի և այն հաստատման վրա, որ «հետաքննությունը չի կարող իրականացվել որևէ այլ միջոցով»՝ առանց լրացուցիչ մանրամասների, թե արդյոք կարող էին օգտագործվել ավելի քիչ ներխուժիչ միջոցներ<sup>25</sup>: Յետաքննության դատավորի մոտեցումն ընդունվել էր Գերագույն դատարանի և Սահմանադրական դատարանի կողմից: «Գաղտնի հսկողության պես զգայուն հարցի դեպքում [ՄԻԵԴ-ը] դժվարություն է տեսնում օրենքի այսպիսի մեկնաբանումը ընդունելու հարցում, որը նախատեսում էր և պահանջում էր նախնական մանրազնի դատական ուսումնասիրություն՝ գաղտնի հսկողության միջոցների կիրառման համաչափությունը պարզելու համար»<sup>26</sup>: Կարելի է փաստել, որ երկրի դատարանների կողմից այս պահանջը շրջանցելու հետահայաց հիմնավորումը հանգեցրել է կամայականության և չի ապահովել բավարար պաշտպանություն հնարավոր չարաշահումներից<sup>27</sup>: Ամենակարևորն է, որ ՄԻԵԴ-ը վերահաստատել է, որ ապացույցների

արդարադատություն, Utrecht Law Review, հատոր 1, մաս 1, էջ 8:  
<sup>21</sup> Տե՛ս Մ. Օ. Դամասկա, Mješanje inkvizitornih i akuzatornih procesnih formi, Hrvatski Ljetopis za Kazneno Pravo I praksu, br. 2/1997.  
<sup>22</sup> Zakon o sigurnosno-obavještajnom sustavu Republike Hrvatske, NN 79/06, 105/06. Հասանելի է <https://www.zakon.hr/z/744/Zakon-o-sigurnosno-obav-je%C5%A1tajnom-sustavu-Republike-Hrvatske>.  
<sup>23</sup> Տե՛ս Đudevic, Z. Osvrt na rezultate rada radne skupine Ministarstva pravosuđa za usklađivanje Zakona o kaznenom postupku s Ustavom Republike Hrvatske, Hrvatski Ljetopis za Kazneno Pravo I praksu, br. 1/2013.  
<sup>24</sup> Ibid.  
<sup>25</sup> Տե՛ս Դրագոջևիչն ընդդեմ Խորվաթիայի, դիմում No. 68955/11 (ընթերցվել է 16 հուլիսի, 2021 թ.), հասանելի է <https://cyriila.org/api/files/1580906744825830sv0rprwyq.pdf> հղումով:  
<sup>26</sup> ՄԻԵԴ, 2015 թ., մամլո հաղորդագրություն, Թմրանյութերի թրաֆիքինգի կասկածյալի հեռախոսի գաղտնալսման օրդերի տրամադրման ժամանակ Խորվաթիայի դատարանների կողմից տրվել են ոչ բավարար պատճառներ:  
<sup>27</sup> Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Անվտանգության ոլորտի կառավարման ժնկյան կենտրոն (DCAF), 2019 թ., Յեռահաղորդակցությունների գաղտնալսման միջոցների իրականացումը, հասանելի է <https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/ENG%20Benchbook%20on%20implementation%20of%20measures%20for%20interception%20of%20communication%20e-book.pdf> հղումով: Տե՛ս նաև՝ Կոլումբիա, Արտահայտվելու ազատությունը աշխարհում: Դրագոջևիչն ընդդեմ Խորվաթիայի (ընթերցվել է 21 սեպտեմբերի, 2021 թ.), հասանելի է <https://globalfreedomofexpression.columbia.edu/cases/dragojevic-v-croatia/> հղումով:

համապատասխանությունը, բացառությամբ վիճարկվող ապացույցների, կախված կլինի յուրաքանչյուր գործի հանգամանքներից: Այս գործի դեպքում, որտեղ ձայնագրությունների բովանդակությունն ապահովում էր ճշգրիտ և վստահելի ապացույցներ, լրացուցիչ ապացույցների անհրաժեշտությունը համապատասխանաբար ավելի քիչ էր:

Հիմնվելով վերը նշվածի վրա՝ դատարանը եզրահանգեց, որ առկա չէ որևէ հանգամանք, որը հիմնավորում է դիմորդի՝ պաշտպանության իրավունքի խախտման պնդումները՝ հիմնվելով բերված ապացույցների վրա, կամ այն պնդումները, որ երկրի դատարանների կողմից ապացույցների գնահատումն արվել էր կամայականորեն: Դատարանը եզրահանգեց, որ «...վիճարկվող ձայնագրությունների որպես ապացույց օգտագործումը դիմորդին չի զրկել արդար դատավարությունից»: Յետևաբար տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին պարբերության խախտում: Թեև այս գործի չափանիշները կարող են կիրառվել հետաքննչական հատուկ միջոցների օգտագործման դատական հսկողություն պարունակող այլ հետախուզական գործերի նկատմամբ, *mutatis mutandis* սկզբունքը կարող է ուղղակիորեն կիրառվել այս գործի նկատմամբ:

Յատկանշական է, որ չափման կամ հավասարակշռման գերմանական դոկտրինը ընդունվել է նաև խորվաթական օրենսդրության մեջ: Այդպիսով՝ ապացույցների բացառման հիմնարար կանոնը ամրագրված է Խորվաթիայի սահմանադրության մեջ: 29-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը սահմանում է, որ «ապօրինաբար ձեռք բերված ապացույցները չեն կարող ընդունվել դատավարության ժամանակ»: Այս կանոնի բացարձակ բնույթը և ոչ հստակ սահմանումը սահմանադրության մեջ հանգեցրին նրան, որ այն փոխադրվեց 1997 թվականին ընդունված Խորվաթիայի քրեական դատավարության մասին օրենքի 9-րդ հոդվածում: Սակայն սա հանգեցրեց բազմաթիվ գործնական խնդիրների (օրինակ՝ Խորվաթիայում կազմակերպված հանցավորության կամ կոռուպցիայի դեպքերում քրեական հետապնդման արդյունավետության սահմանափակման): Ընթացակարգային օրենսդրության երկրորդ ամենակարևոր բարեփոխումը (հաշվի առնելով, որ քրեական հետապնդման գործունեության և արդյունավետության բարելավումը Խորվաթիայի՝ Եվրոպական միությանն ինտեգրվելու հիմնական պայմաններից մեկն էր) քրեական դատավարությունների ընթացքից ապացույցների բացառման կանոնների հիմնարար փոփոխություններն էին:

Քրեական դատավարության մասին 2008 թվականի օրենքը առաջին անգամ ներկայացրեց «հավասարակշռման» կամ «չափման» մոդելը: Այս մոտեցումը պետք է կիրառվեր բոլոր տեսակի ապացույցների նկատմամբ, բացառությամբ այնպիսի ապացույցների, որոնք, ըստ գերմանական դոկտրինի, համարվում էին անձնական (ինտիմ) ոլորտի, այն է՝ խոշտանգումների կամ որևէ այլ անմարդկային կամ ստորացուցիչ գործողության միջոցով ձեռք բերված ապացույցներ: Սակայն այս դրույթը չեղարկվեց Խորվաթիայի Սահմանադրական դատարանի կողմից այն պատճառաբանությամբ, որ «հավասարակշռման» կամ «չափման» կանոնը և համաչափության սկզբունքը չպետք է կիրառվեն մարդու իրավունքների խախտման դեպքերում<sup>28</sup>: Խորվաթիայի քրեական դատավարության մասին օրենքի փոփոխությունների ընդունումից հետո համապատասխան դրույթները փոփոխվել են: Գործնականում այս դոկտրինի կիրառումը կարգավորվում է ապօրինի ապացույցների չորս խմբերի դասակարգմամբ: Առաջին խումբը ներառում է խոշտանգումների կամ այլ անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի միջոցով ձեռք բերված ապացույցները: Երկրորդ խումբը ներառում է պաշտպանվող կողմի՝ պաշտպանության իրավունքի խախտմամբ, նրա բարի համբավին կամ պատվին վնասի հասցմամբ կամ անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության խախտմամբ ձեռք բերված ապացույցները, բացառությամբ այն դեպքերի, երբ ապացույցները ձեռք են բերվում լուրջ հանցագործությունների գործերի համար, որոնց դեպքում քրեական հետաքննության շահերը գերակա են համարվում

<sup>28</sup> Տե՛ս Խորվաթիայի սահմանադրական դատարան, Վճիռ, 19 հուլիսի, 2012 թ., Գործ No. U-I-448/2009, U-I-602/2009, U-I1710/2009, U-I-18153/2009, U-I5813/2010, U-I-2871/2011:



խախտվող իրավունքի նկատմամբ: Թեև սա տեսականորեն հնարավոր է դարձնում հետախուզության տեղեկությունների կիրառման թույլատրելիությունը (օրինակ՝ հեռահաղորդակցության գաղտնալուծման արդյունքում ձեռք բերված տեղեկություններ) խորվաթիայի քրեական դատավարության ընթացակարգերում, սակայն առկա են այլ խոչընդոտներ: Օրինակ, թեև դատավորները կարող են ստանալ դասակարգված տեղեկությունների հասանելիություն, չկան իրավական հիմքեր դասակարգված տեղեկատվությունը դատական վճռի մեջ ներառելու կամ պաշտպանվող կողմին դասակարգված տեղեկատվության հասանելիության թույլտվություն տրամադրելու համար, քանի որ դասակարգված տեղեկությունները պաշտպանված են օրենքով (Դասակարգված տեղեկությունների մասին օրենք): Եթե դասակարգված տեղեկություններ ստացող/տերը ապադասակարգի տեղեկությունը, դա հնարավոր կդարձնի այդ տեղեկության՝ դատավարության ընթացքում օգտագործումը: Այդուհանդերձ, ապացույցների այս խմբի համատեքստում համաչափության սկզբունքը կարող է կիրառվել խոշտանգումների կամ այլ անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի միջոցով ձեռք բերված ապացույցներին, այն դեպքում, եթե դատավճիռը չի կայացվել հիմնվելով բացառապես այդ ապացույցների վրա (Քրեական դատավարության մասին օրենք, հոդված 10, պարբերություն 4): Ապօրինի ապացույցների երրորդ խումբը ներառում է քրեական ընթացակարգերը կարգավորող դրույթների խախտմամբ ձեռք բերված ապացույցները: Այս դեպքերում հավասարակշռման դոկտրինը չի կարող կիրառվել, քանի որ քրեական ընթացակարգերը սահմանած օրենսդիրն արդեն հավասարակշռել է այդ շահերը: Ապօրինի ապացույցների չորրորդ խումբը ներառում է «թունավոր ծառի պտուղներ» դոկտրինի կիրառմամբ ձեռք բերված ապացույցները, որոնց կիրառումը, ըստ խորվաթիայի գրականության և խորվաթիայի Գերագույն դատարանի նախադեպային իրավունքի, բավականին սահմանափակ է<sup>29</sup>: Գերմանիայում և Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի երկրներում ապացույցների ընդունելիությունը հիմնականում կարգավորվում է օրենքով, և ընթացակարգային օրենքները ներառում են խստորեն սահմանված դրույթներ: Գերմանիայի Քրեական դատավարության մասին ներկայիս օրենքը ամբողջությամբ արգելում է խոշտանգումների կամ այլ անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի միջոցով ձեռք բերված ապացույցների օգտագործումը, որոնք խախտում են պաշտպանվող կողմի հիմնարար իրավունքները<sup>30</sup>: Ահաբեկչության և կազմակերպված հանցավորության կանխարգելմանն առնչվող հետախուզության հավաքած տեղեկությունների վերաբերյալ, սակայն, Գերմանիայի օրենքը հղում է կատարում, այսպես կոչված, չափման կամ հավասարակշռման տեսությանը (Abwägungslehre), այն է՝ համաչափության ստուգման սկզբունքին: Ըստ այս դոկտրինի՝ ապացույցների հավաքման ընթացքում օրենքի թեթև խախտումները կարող են ընդունելի լինել ավելի լուրջ քրեական գործերի դեպքում:

Համաչափության սկզբունքը հիմնված է մի կողմից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, մյուս կողմից՝ գործուն քրեական հետապնդման անհրաժեշտության վրա<sup>31</sup>: Այսպիսով, ըստ համաչափության սկզբունքի, իրավունքների խախտման ուժգնությունը և բնույթը պետք է զգալիորեն փոքր լինեն հանցագործության լրջությունից՝ որոշելու համար, թե արդյոք այդ իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցները թույլատրելի են: Հետախուզության ծառայությունների կողմից ապացույցների ձեռքբերման և ներկայացման սահմանված ընթացակարգերի խախտումներն այդպիսով միշտ չէ, որ հիմք են դառնում այդ ապացույցներն ապօրինի համարելու համար: Ապացույցները գնահատվում են յուրաքանչյուր առանձին դեպքում:

<sup>29</sup> Տե՛ս Զալաչիև, Գ., Արիֆի, Բ., Մարսավելսկի Ա., Բոժինովսկի Ա., 2018 թ., Անընդունելի ապացույցները քրեական դատավարության մեջ. իրավական վերլուծություն, ԵԱՀԿ Առաքելություն Սկոպյեում:

<sup>30</sup> Գերմանիայի Քրեական դատավարության օրենսգիրք (Strafprozeßordnung), հասանելի է at: [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_stpo/englisch\\_stpo.html](https://www.gesetze-im-internet.de/englisch_stpo/englisch_stpo.html) հղումով:

<sup>31</sup> Տե՛ս Շեշիև ընդդեմ խորվաթիայի, 31 մայիսի, 2007 թ., Դիմում No. 40116/02: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Ի. Բոյանիչ / 2. Դոկրոնիչ, էջ 974:

Նույնիսկ այսօր Գերմանիան չունի հետախուզության հավաքած ապացույցների՝ որպես անընդունելի ապացույց բացառման իրավական կանոնների ամբողջական համապարփակ համակարգ: Չափանիշների մեծ մասը մշակվել է Գերմանիայի դատարանների նախադեպային իրավունքի հիման վրա, որը մերժել է հետախուզության հավաքած ապացույցների՝ օրենքով ավտոմատ արգելումը և կիրառել է այս հարցին Նոր մոտեցում: Պատճառները կապված են «ապօրինի ապացույցների» բացառման կանոնների տարբեր նպատակների հետ<sup>32</sup>: Անգլո-սաքսոնական իրավունքի մեղադրական համակարգում քրեական դատավարությունից ապացույցների բացառումը կարգավորող կանոնները հիմնականում նպատակ ունեն կանխելու իրավապահ մարմինների կողմից ապօրինի եղանակներով ապացույցների ձեռքբերումը: Իսկ գերմանական ընթացակարգերը նախապատվությունը տալիս են դատարանի՝ արժեքավոր ճշմարտությունն ապացուցելու կարողությանը:

**Իտալիան** ունի երկակի իրավական համակարգ, որը ներառում է ոչ միայն ստանդարտ քրեական դատավարության մասին օրենքը, այլ նաև հատուկ քրեական օրենսդրություն, որն ուղղված է Մաֆիայի դեմ: Երկիրն ունի քրեական օրենսդրության նախաձեռնողական գործիքների լավ մշակված հավաքածու: Իտալիայի Քրեական դատավարության մասին օրենքը նախատեսում է կանխարգելիչ միջոցներ, ներառյալ ոստիկանության կողմից հատուկ հսկողություն, ազատ տեղաշարժի սահմանափակում և տնային կալանք<sup>33</sup>: Այդ միջոցների կիրառումը հիմնված է ոչ թե խելամիտ կասկածի, այլ կազմակերպված հանցավորության հետ կապված կազմակերպությունների հետ կապի կասկածի վրա: Ժամանակի ընթացքում կանխարգելիչ միջոցներն ընդլայնվել են՝ ներառելով ահաբեկչության դեմ ուղղված միջոցները ԵՄ Ձերբակալության օրդերների եվրոպական շրջանակային համաձայնագրի ընդունումից հետո:

Այս կանխարգելիչ միջոցները, որոնք ուղղված են լուրջ հանցագործությունները կանխելու համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքմանը, չեն պահանջում թույլտվություն/օրդեր, նույնիսկ առանց լուրջ հանցագործության տեղի ունենալու մասին զգալի ապացույցների մասնավոր տներում խուզարկություններ իրականացնելու համար և ունեն ավելի երկար գործողության ժամկետ<sup>34</sup>: Այս միջոցները ոչ միայն լուրջ ահաբեկչական գործողությունների, այլ նաև սովորական քրեական հետաքննությունների դեպքում կիրառելու համար բավարար է ցույց տալ, որ առկա են հանցագործության ցուցիչներ՝ հիմնված խելամիտ կասկածի վրա: Յետախուզական գործակալություններն իրավասու են գաղտնալսելու հեռահաղորդակցությունները Հանրային դատախազության գրասենյակի թույլտվությամբ, սակայն հետախուզական գործակալությունների կողմից այս եղանակով հավաքված տեղեկությունները չեն կարող օգտագործվել նախաքննության կամ քննության ընթացքում<sup>35</sup>: Իտալիայի Քրեական դատավարության օրենսգիրքը հետախուզության հավաքած տեղեկությունների՝ դատարանում որպես ապացույց կիրառման հարցում ունի շատ բաց և յուրահատուկ լուծում: Օրենքը նախատեսում է մասնակի, այլ ոչ բացարձակ արգելք հետախուզության հավաքած տեղեկությունների՝ դատարանում որպես ապացույց օգտագործելու համար: Ավելին՝ Քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ հետախուզական ծառայությունների հավաքած չմշակված տվյալները կարող են կիրառվել միայն դատական քննություն սկսելու համար: Այդ տեղեկությունները չեն կարող ընդգրկվել նախադատական կամ դատական քննությունների ընթացակարգերում: Իտալիայի Գերագույն դատարանը որոշել է նաև, որ

<sup>32</sup> Տե՛ս Ի. Մ. Շաալ, 2002 թ., Beweisverwertungsverbot bei informatischer Befragung im Strafverfahren, Tenea, էջ 66:

<sup>33</sup> Տե՛ս Իտալիայի Քրեական դատավարության օրենսգիրք, 124/2007 թ.:

<sup>34</sup> Մ. Նինո, 2007 թ., Աբու Օմարի գործը Իտալիայում և ԿՅԳ՝ Եվրոպայի մեկնաբանությունների ազդեցությունը իրավապահ և հետախուզական գործողությունների վրա, Revue Internationale de Droit Pénal, հատոր 78 (1-2), էջ 113-141:

<sup>35</sup> Zakon o sigurnosno-obavještajnom sustavu Republike Hrvatske, NN 79/06, 105/06.: Հասանելի է <https://www.zakon.hr/z/744/Zakon-o-sigurnosno-obav-je%20i%20tajnom-sustavu-Republike-Hrvatske>.



ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների՝ սև ցուցակում ներառումը չի կարող որպես ապացույց օգտագործվել դատարանում<sup>36</sup>:

**Նիդերլանդներն** այս առումով տարբերվում է որպես երկիր, որը Զրեական դատավարության օրենքում համապարփակ կերպով կիրառում է նախաձեռնողական իրավապահության գաղափարը: Նիդերլանդներում դատավարության ընթացքում հետախուզության հավաքած ապացույցների կիրառումը հասկանալու համար կարևոր է դիտարկել երկու հիմնական օրենքներ՝ Զրեական դատավարության օրենսգիրքը<sup>37</sup> և Պաշտպանված վկաների մասին ակտը<sup>38</sup>: 1999 թվականին Նիդերլանդների Զրեական դատավարության օրենսգիրքը ներառեց հատուկ հետաքննչական միջոցներ, ինչպիսիք են հսկողությունը, ներթափանցումը, գաղտնալսումները, ինչպես նաև համակարգային և էլեկտրոնային հսկողությունը՝ կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարելու համար: Այս միջոցները կարող են օգտագործվել միայն այն բանից հետո, երբ ուսումնասիրող դատավորը հավաստի, որ նման ներխուժիչ միջոցների կիրառման համար իրավական նախապայմանները բավարարված են: Զրեական դատավարության օրենսգրքի բարեփոխումները սահմանեցին նոր ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս ահաբեկչական հանցագործությունների քրեական հետաքննության դեպքում օրինական կերպով որևէ անձի նկատմամբ կիրառել ներխուժիչ միջոցներ՝ հիմնվելով խելամիտ կասկածի, այլ ոչ ահաբեկչական գործողության իրականացման և/կամ պլանավորման վերաբերյալ տեղեկությունների վրա: Այսպիսի միջոցների օգտագործման նվազագույն շեմը կախված է իրականացվող հանցագործության մասին խելամիտ կասկածից կամ կազմակերպված հանցավորության համատեքստում հանցագործությունների՝ պլանավորման կամ իրականացման մասին խելամիտ կասկածներից<sup>39</sup>: Նիդերլանդների հետախուզությունը իրավասու չէ հետաքննելու քրեական հանցագործություններ<sup>40</sup>: Նիդերլանդների հետախուզության ծառայության և իրավապահ մարմինների միջև տեղեկությունների փոխանակումը խստորեն կարգավորվում է օրենքով: Համագործակցությունը տեղի է ունենում միակողմանի եղանակով:

Հետախուզական ծառայությունները կարող են ոստիկանությանը տրամադրել տեղեկություններ քրեական հետաքննության համար, սակայն նրանք պարտավոր չեն տեղեկացնել իրավապահ մարմիններին: Մյուս կողմից՝ ոստիկանությունը և դատախազությունը պարտավոր են տեղեկացնել հետախուզական ծառայություններին<sup>41</sup>: Նիդերլանդների Զրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ ոստի-

<sup>36</sup> Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Դ. Պոլիտանո, 2009 թ., ‘Sicurezza e diritto penale’. *Rivista italiana di diritto e procedura penale* 52(2), էջ 547-568, Կ. Նուտիո, 2013 թ., Անվտանգությունը և քրեական օրենսդրությունը, Աբրոջ հարաբերություն, Մ. Ֆիշերա և Ջ. Զրեմեր (խմբ.), Օրենքը և անվտանգությունը Եվրոպայում. վերանայելով անվտանգության բաղադրությունը (Քեմբրիջ, Անտվերպեն և Փորթլանդ, Ինտերսենթիա):

<sup>37</sup> Նիդերլանդների քրեական դատավարության օրենսգիրք, ընթերցվել է 15 հուլիսի, 2021 թ.), հասանելի է [https://www.legislationline.org/download/id/6416/file/Netherlands\\_CPC\\_am2012\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/6416/file/Netherlands_CPC_am2012_en.pdf). Articles 226g-226m are relevant to the protection of intelligence officers հղումով:

<sup>38</sup> Պաշտպանված վկաների մասին ակտ, Kamerstukken II 2003-2004, 29 743, no. 1; Kamerstukken II 2003-2004, 29 743, no. 2; Kamerstukken II 2003-2004, 29 743, no. 3; Kamerstukken II 2003-2004, 29 743, No. 4, Wet afgeschermd getuigen.

<sup>39</sup> Ջ.Ա.Ե. Վերվել, 2005 թ., Ահաբեկչությունը և տեղեկատվության փոխանակումը հետախուզության և իրավապահ մարմինների միջև ԱՄՆ-ում և Նիդերլանդներում. Արտակարգ իրավիճակների քրեական արդարադատություն, *Utrecht Law Review*, հատոր. 1, մաս 1, էջ 1-27: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Ջիլլ Ե. Բ. Զոստեր վան Վուրհաուս, 2006 թ., Հետախուզության տեղեկությունները որպես ապացույց. Նիդերլանդներում առաջարկվող հետախուզության պաշտպանված վկաների մոտեցման համեմատական քրեական ուսումնասիրություն Անգլիայում և Ուելսում և օրենքների համապատասխանությունը ՄԻԵԿ-ի 6(3)-րդ հոդվածին, *Utrecht Law Review*, հատոր 2, մաս 2, էջ 18-22:

<sup>40</sup> Նիդերլանդների քրեական դատավարության օրենսգիրք (ընթերցվել է 15 հուլիսի, 2021 թ.) հոդված 9:

<sup>41</sup> Ոստիկանության կոլեկտիվի մասին ակտ, Հոդված 17 և Հոդված 15(2) (*Wet op de politieregisters*): Տե՛ս նաև Ջ.Ա.Ե. Վերվել, 2005 թ., Ահաբեկչությունը և տեղեկատվության փոխանակումը հետախուզության և իրավապահ մարմինների միջև ԱՄՆ-ում և Նիդերլանդներում. Արտակարգ իրավիճակների քրեական արդարադատություն, *Utrecht Law Review*, հատոր. 1, մաս 1, էջ 6:

կանության հատուկ ստորաբաժանումները կարող են հավաքել քրեական հետախուզական տվյալներ կազմակերպված հանցավորության և ահաբեկչության վերաբերյալ:

Տարածաշրջանային առանձին ոստիկանական բաժանումներն ունեն իրենց հատուկ ստորաբաժանումները, սակայն նման ստորաբաժանումներ առկա են նաև ազգային մակարդակում, օրինակ՝ Քրեական հետաքննությունների ազգային դեպարտամենտը, ռազմական ոստիկանությունը, Կառավարական հետաքննությունների դեպարտամենտը և Եկամուտների դեպարտամենտը: Նիդերլանդների քրեական հետաքննությունների բաժնի (CIE) կողմից մշակված զեկույցները/ տեղեկությունները կարող են օգտագործվել որպես սկզբնական տեղեկատվություն քրեական հետաքննություններ սկսելու համար և կարող են հանգեցնել «խելամիտ կասկածի»՝ քրեական հետապնդումը սկսելու համար<sup>42</sup>: Նիդերլանդների Քրեական դատավարության մասին օրենքը նաև թույլ է տալիս վտանգի ենթարկվող վկաներին<sup>43</sup> և ոստիկանության հատուկ ստորաբաժանումների իրազեկիչներին ցուցմունքներ տալ անանուն եղանակով կամ դատարանում պաշտպանիչ միջոցների կիրառմամբ: Սակայն հատուկ ստորաբաժանումների վերջնական զեկույցը չունի որևէ ապացուցողական արժեք<sup>44</sup> և դատավարության ընթացքում չի կարող օգտագործվել որպես ապացույց:

Այդուհանդերձ, Նիդերլանդների դատավարական ընթացակարգերը թույլ են տալիս ոստիկանության տարածաշրջանային հատուկ ստորաբաժանումների ղեկավարներին վկայություններ տալ դատարանում, և նրանց տված վկայություններն ընդունելի են որպես ապացույց:

Նրանք իրավունք ունեն չպատասխանելու ցանկացած հարցի, որը կարող է բացահայտել տեղեկությունների աղբյուրը նույնիսկ այն դեպքում, եթե հարցը վերաբերում է իրազեկիչներին: Դատարանը կարող է պահանջել, որ պաշտպանությունը չտա հարցեր, որոնք կարող են խելամիտ վտանգ ներկայացնել ընթացիկ հետաքննությունների համար: Սակայն ինչ վերաբերում է հետախուզության հավաքած ապացույցների՝ դատարանում ուղղակիորեն օգտագործմանը, Նիդերլանդների իրավագիտությունը շեղվել է նախնական մոտեցումից, ըստ որի՝ խելամիտ կասկածի հիմքերը չեն կարող հիմնված լինել բացառապես հետախուզական ծառայությունների հավաքած ապացույցների վրա<sup>45</sup>:

Նիդերլանդների դատարանները շատ մանրազնին կերպով ուսումնասիրել են հետախուզության հավաքած ապացույցները մարդու իրավունքների լուրջ խախտումներին առնչվող դեպքերում՝ անարդար դատավարությունները կանխարգելելու նպատակով: Ահաբեկչության դեմ ուղղված նոր օրենսդրության շրջանակում, սակայն, Նիդերլանդների Գերագույն դատարանը վճռել է, որ հետախուզության հավաքած տվյալները կարող են որպես ապացույց օգտագործվել քրեական դատավարությունների շրջանակներում, սակայն միայն այն կանխավարկածով, որ գոյություն չունի որևէ իրավական նորմ/կանոն, որը կարգել էր այդպիսի տվյալների օգտագործումը որպես ապացույց<sup>46</sup>:

<sup>42</sup> Նիդերլանդների Թագավորության քրեական դատավարության օրենսգիրք, Զոդված 27 (ընթերցվել է 21 սեպտեմբերի, 2021 թ.), հասանելի է [https://www.legislationline.org/download/id/6416/file/Netherlands\\_CPC\\_am2012\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/6416/file/Netherlands_CPC_am2012_en.pdf) հղումով:

<sup>43</sup> Դատարաններն առաջին անգամ անդրադարձել են վտանգի ենթարկվող վկաների պաշտպանությանը, ինչը հետագայում արտացոլվել է Վկաների պաշտպանության մասին ակտում (Wet getuigenbescherming, Wet van 11 նոյեմբերի, 1993 թ., Ստատսբլադ 603) ՄԻԵԴ-ի կողմից Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների գործով վճռից հետո, 20 նոյեմբերի, 1989 թ., ՄԻԵԴ: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Ջ.Ա.Ե. Վերվել, 2005 թ., Ահաբեկչությունը և տեղեկատվության փոխանակումը հետախուզության և իրավապահ մարմինների միջև ԱՄՆ-ում և Նիդերլանդներում. Արտակարգ իրավիճակների քրեական արդարադատություն, Utrecht Law Review, հատոր 1, մաս 1, էջ 6:

<sup>44</sup> Ապացուցողական արժեքը կամ ապացույցի արժեքը կարող է սահմանվել որպես ապացույց, որը բավարար չափով օգտակար է դատավարության ընթացքում որևէ կարևոր բան ապացուցելու համար: Ապացուցողական արժեքը կարող է որոշվել միայն տվյալ գործի քննությունը նախագահող դատավորը:

<sup>45</sup> Նիդերլանդների Գերագույն դատարան, LJN No. AF2141, գործ 10/150080/0:

<sup>46</sup> Նիդերլանդների Գերագույն դատարան, LJN No. AV4122 and LJN No. AV4144 (ընթերցվել է 14 հուլիսի, 2021 թ.), հասանելի է <https://uitspraken.rechtspraak.nl/inziendocument?id=ECLI:NL:HR:2006:AV4122> հղումով: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Ջիլլ Ե. Բ. Ջոստեր վան Վուրհաուս, 2006 թ., Գետախուզության տեղեկությունները որպես ապացույց. Նիդերլանդներում առաջարկվող հետախուզության պաշտպանված վկաների մոտեցման համեմատական քրեական ուսումնասիրություն Անգլիայում և

Ուստի պետք է լինի իրավական հիմք՝ առարկաները կամ տեղեկությունները որպես ապացույց օգտագործելու համար: Հետախուզության հավաքած տեղեկությունների՝ որպես ապացույց օգտագործումը հնարավոր դարձնող իրավական կանոնը սահմանելու փոխարեն օրենսդրությունը սահմանում է, որ դատարանները պարտավոր են յուրաքանչյուր դեպքում ուսումնասիրել, թե արդյոք հետախուզության հավաքած տվյալները կարող են ներգրավվել որպես ապացույց, և արդյոք դրանք համապատասխանում են ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի արդար դատավարության պահանջներին<sup>47</sup>:

Նիդերլանդների իրավական համակարգում երկրորդ կարևոր և յուրահատուկ իրավական լուծումը Պաշտպանված վկաների մասին ակտն է<sup>48</sup>: Այս օրենքը որոշ փոփոխությունների ենթարկեց Քրեական դատավարության մասին օրենքի մի քանի կարևորագույն կետեր<sup>49</sup>: Ակտը հնարավորություն է տալիս նախաքննության դատավորին օրինական կերպով հանրությունից, ներառյալ քրեական դատավարության մյուս մասնակիցներից թաքցնելու ցանկացած ապացուցողական նյութ (սովորաբար՝ հետախուզության պաշտոնյայի կամ ոստիկանության հատուկ ստորաբաժանումների ղեկավարների տված վկայություններ)՝ ազգային անվտանգության պաշտպանության նկատառումներով: Հետախուզության պաշտոնյան վկայություն է տալիս նախաքննության դատավորի առջև և պետք է գրավոր համաձայնություն տա, որպեսզի վկայության սղագրությունը տրամադրվի պաշտպանությանը և դատախազությանը՝ որպես դատավարության կողմերի, և օգտագործվի որպես ապացույց: Դատավորը նույնպես ստանում է սղագրությունը և վկայության փաստաթղթերը, որոնց համար հետախուզության պաշտոնյան տվել է գրավոր համաձայնություն: Ավելին՝ նախաքննության դատավորը կարող է որպես վկա ներգրավվել՝ վկայությունը հաստատելու համար, սակայն սույն ակտը արգելում է նրանց տրամադրել որևէ տեղեկություն, որը կարող է վտանգի ենթարկել հետախուզության պաշտոնյայի ինքնությունը: Նիդերլանդներում թույլատրվում են գրավոր կամ բանավոր ապացույցները: Հետևաբար հետախուզության պաշտոնյայի տված վկայության սղագրությունը որպես ապացույց ընդունելի է դատարանում, եթե այն բավարարում է օրենքով սահմանված երկու չափանիշները. (1) վկայի (հետախուզության պաշտոնյայի) վկայությունները լսվել են քրեական դատավարության ընթացակարգին համապատասխան և (2) այն հանցագործությունը, որի համար պաշտպանվող կողմը ենթարկվում է քրեական հետապնդման, լուրջ հանցագործություն է՝ նվազագույնը հինգ տարի ազատազրկման պատժաչափով<sup>50</sup>:

**Սերբիայի** օրենքը քրեական դատավարության մասին սահմանում է ապօրինի ապացույցների համապարփակ բացառման ամենալայն կանոնը՝ համեմատած Արևմտյան Բալկանների տարածաշրջանի մյուս պետությունների հետ: Չկան հետախուզության հավաքած տեղեկությունների՝ որպես ապացույց օգտագործումը կարգավորող օրենքներ կամ հստակ կանոններ:

Քրեական դատավարության մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերությունը սահմանում է, որ «դատարանի վճիռները չեն կարող հիմնված լինել այնպիսի ապացույցների վրա, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրենք իրենցով կամ

Ուելսում և օրենքների համապատասխանությունը ՄԻԵԿ-ի 6(3)-րդ հոդվածին, *Utrecht Law Review*, հատոր 2, մաս 2, էջ 18-22:

<sup>47</sup> Ջ.Ա.Ե. Վերվել, 2005 թ., Ահաբեկչությունը և տեղեկատվության փոխանակումը հետախուզության և իրավապահ մարմինների միջև ԱՄՆ-ում և Նիդերլանդներում. Արտակարգ իրավիճակների քրեական արդարադատություն, *Utrecht Law Review*, հատոր. 1, մաս 1, էջ 6:

<sup>48</sup> Պաշտպանված վկաների մասին ակտի անգլերեն տարբերակը (ընթերցվել է 14 հուլիսի, 2021 թ.), հասանելի է <https://zoek.officielebekendmakingen.nl/kst-29743-7.html> հղումով:

<sup>49</sup> Նիդերլանդների Քրեական դատավարության օրենսգրքի 187d, 226g-226m, 226b, 178a, 226a հոդվածների փոփոխություններ:

<sup>50</sup> *Kamerstukken II 2003-2004*, 29 743, no. 2, *Kamerstukken II 2004-2005*, 29 743, Հանրային դատախազության ղեկավարները, հասանելի է [www.om.nl/files](http://www.om.nl/files) հղումով, Թ. Փրաքքեն, 2004թ., 'Naar een cyclopisch (straf)recht', *Nederlands Juristenblad*, No. 45; Y. Buruma and E.R. Muller. 2003. 'Wet Terroristische Misdrijven in perspectief', *Nederlands Juristenblad*, No. 40, հասանելի է [publicaties/rechtsbescherming\\_op\\_de\\_helling.pdf](http://publicaties/rechtsbescherming_op_de_helling.pdf):

դրանց հավաքման եղանակի պատճառով հակասում են Սահմանադրությանը, սույն օրենսգրքին, միջազգային իրավունքի այլ պահանջներին կամ ընդունված կանոններին և վավերացված համաձայնագրերին, բացառությամբ դատական ընթացակարգերի ընթացքում այդ ապացույցների հավաքմանն առնչվող դեպքերի»<sup>51</sup>: Հետախուզության հավաքած ապացույցների օգտագործումը, սակայն, քրեական դատավարության ընթացակարգի հարաբերական, այլ ոչ բացարձակ խախտում է<sup>52</sup>: Օրենքի 438-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին ենթապարբերությունը հստակորեն սահմանում է այն բացառությունը, որի դեպքում տեղի չի ունենա քրեական դատավարության ընթացակարգի բովանդակային խախտում՝ անկախ այն հանգամանքից, որ վճիռը հիմնված է անընդունելի ապացույցների վրա քրեական դատավարության մասին օրենքի պահանջներին համապատասխան: Սա նշանակում է, որ դատարանը կարող է վճիռ կայացնել՝ հիմնվելով անընդունելի ապացույցների վրա, այն դեպքում, եթե առկա են տվյալ փաստն ապացուցող այլ ապացույցներ ևս:

**Սլովենիայի** քրեական դատավարության մասին օրենքը սահմանում է, որ «դատարանը չի կարող իր վճիռը հիմնել այնպիսի ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել սահմանադրությամբ սահմանված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտմամբ, ինչպես նաև այնպիսի ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել քրեական դատավարության դրույթների խախտմամբ, և որոնք սույն օրենքի ներքո չեն կարող հիմք դառնալ դատարանի վճռի համար, կամ որոնք ձեռք են բերվել նման անընդունելի ապացույցների հիմքով»<sup>53</sup>: Սույն դրույթի առաջին մասը կարող է մեկնաբանվել որպես համաչափության ստուգման կիրառումը թույլատրող դրույթ: Այս դրույթի երկրորդ մասը բացառում է միայն այն ապացույցների օգտագործումը, որոնք ձեռք են բերվել քրեական դատավարության մասին օրենքի դրույթներին հակասությամբ, որոնց վրա, ըստ Ակտի, չի կարող հիմնվել կայացվող վճիռը:

Սկզբունքորեն, սա թույլ է տալիս այլ ապացույցների օգտագործումը՝ անկախ այն ընթացակարգային խախտումներից, որոնք կապված են այդ ապացույցների ձեռքբերման հետ: Կարևոր է դիտարկել նաև նույն հոդվածի նախորդ պարբերությունը, որը սահմանում է, որ դատարանի իրավունքը՝ «գնահատելու ներկայացված փաստերը, չի կարող սահմանվել կամ սահմանափակվել ապացույցներին վերաբերող որևէ կոնկրետ կանոններով»: Հետևաբար հնարավոր է, որ քրեական դատավարության մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին պարբերությունը թույլ է տալիս որոշ ճկունություն ապացույցների ընդունելիության հարցում:

**Իսպանիայում**, թեև քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը բազմաթիվ անգամներ փոփոխությունների են ենթարկվել, գոյություն չունեն հետախուզության տեղեկությունների՝ դատարանում օգտագործումը կարգավորող կանոններ: Հետախուզության մասին օրենքը ներառում է դրույթ, որը սահմանում է հետախուզության և իրավապահ ծառայությունների համագործակցությունը, ինչպես նաև հետախուզության տեղեկությունների՝ որպես ապացույց ընդունելիությունը՝ իրավապահ մարմինների միջև տեղեկատվության և հետախուզական տեղեկությունների փոխանակման հեշտացման վերաբերյալ Խորհրդի շրջանակային բանաձևի շրջանակում<sup>54</sup>: Թեև Իսպանիայի քրեական դատավարության օրենսգրքում առկա չեն հատուկ դրույթներ, դատական պրակտիկայում հետախուզության տրամադրած զեկույցները դիտարկվում

<sup>51</sup> Սերբիայի քրեական դատավարության մասին օրենք, հասանելի է [https://www.legislationline.org/download/id/3560/file/Serbia\\_2011%20CPC%20English\\_.pdf](https://www.legislationline.org/download/id/3560/file/Serbia_2011%20CPC%20English_.pdf) հղումով:

<sup>52</sup> Advokatska komora Srbije, Projekat reforme krivičnog zakonodavstva: konačan izvještaj 2016 godina, Beograd, էջ 48:

<sup>53</sup> Սլովենիայի քրեական դատավարության մասին օրենք, Հոդված 18, պարբերություն 2, հասանելի է [https://www.legislationline.org/download/id/9233/file/SLOV\\_CPC.pdf](https://www.legislationline.org/download/id/9233/file/SLOV_CPC.pdf) հղումով:

<sup>54</sup> Իսպանիայի քրեական դատավարության օրենսգրք, 11/2002, 6 մայիսի, Հետախուզության ազգային կենտրոնի կարգավորման մասին: Տե՛ս նաև Մար Զիմենո Բուլնես, 2017 թ., քրեական դատավարության ընթացքում հետախուզության տեղեկությունների օգտագործումը. մարտահրավեր պաշտպանության իրավունքներին եվրոպական և իսպանական համատեքստում, Եվրոպական քրեական օրենքի նոր հանդես, հատոր 8, No. 2, հունիս, էջ 171-191:

են որպես լրացուցիչ հատուկ առանձնահատկություններ ունեցող փորձագիտական ապացույցներ<sup>55</sup>: Դատական պրակտիկայում հետախուզության ներկայացրած զեկույցները դասակարգվում են նույն կերպ, ինչպես վկայությունները և փորձագիտական ապացույցները: Սակայն պաշտպանությունը չի կարող հարցաքննել հետախուզության պաշտոնյայի, հետևաբար սա ամբողջապես չի համապատասխանում հակադրության սկզբունքին և դատավարության ընթացքում առերեսման կանոններին<sup>56</sup>:

Հետախուզության աղբյուրները մեղադրյալի առջև բացահայտելու այսպիսի դժվարությունը բացատրվում է ազգային անվտանգության պաշտպանության նկատառումներով, որը համարվում է առավել կարևոր, քան հիմնարար իրավունքները: Սակայն իր վճիռներից մեկում Իսպանիայի Գերագույն դատարանը շեշտել է ոստիկանության զեկույցների կարևորությունը, որոնք հղում էին կատարում հետախուզության աշխատանքներին, քանի որ դրանք քրեական դատավարության ընթացքում ներառում էին հատուկ տեխնիկական գիտելիքներ (փորձագիտություն): Վճիռը ենթադրում էր հետախուզական տեղեկությունների օգտագործում, որը դիտարկվում էր որպես փորձագիտական ապացույց ահաբեկչության հետ կապված գործերի համար<sup>57</sup>:

**Միացյալ Թագավորություն** ունի հատուկ օրենսդրություն, որը կարգավորում է քրեական դատավարությունների ընթացքում դասակարգված հետախուզական տեղեկությունների օգտագործումը: Հետախուզական ծառայությունները կարող են իրենց հետախուզական տեղեկությունները տրամադրել իրավապահ մարմիններին: Սակայն իրավապահ մարմինները չեն կարող ուղղակիորեն օգտագործել այս տեղեկությունները: Նրանք պարտավոր են իրականացնել իրենց հետաքննությունը և կառուցել գործը, քանի որ հետախուզության ուղղակիորեն տրամադրած տեղեկությունները ընդունելի չեն դատարանում<sup>58</sup>: 2013 թվականի Արդարադատության և անվտանգության ակտով սահմանված փակ նյութերով դատավարությունները և հետախուզության պաշտոնյաների կողմից գրավոր վկայությունների ընդունելիությունը կարևոր բաղադրիչներ են հետախուզության հավաքած ապացույցների՝ դատարանում ընդունելիության համար<sup>59</sup>:

Նախևառաջ, փակ նյութերով դատավարությունները գաղտնի են, սակայն դատավորը և անվտանգության թույլտվություն ունեցող հատուկ փաստաբանները հասանելիություն ունեն հետախուզության նյութերին: Դատավորն իրավասու է որոշելու, կառավարության ինտրանքով, արդյոք պետք է ապացույցները ներկայացնել դատարանում գաղտնի կերպով՝ առանց պաշտպանվող կողմին այդ նյութերի հասանելիություն տրամադրելու: Արդարադատության և անվտանգության ակտը կանոնակարգել է փակ նյութերով դատավարությունների օգտագործումը այն քաղաքացիական գործերի համար, որոնց դեպքում նման նյութերի բացահայտումը կարող է վնաս հասցնել ազգային անվտանգությանը: Այսպիսի դատավարությունն առաջին անգամ հնարավոր է դարձել 1997 թվականի

<sup>55</sup> Ռ. Քասթիլեհո Մանկանարես, 2011 թ., 'La prueba pericial de inteligencia', Diario La Ley, 16 դեկտեմբերի, No. 7756, հասանելի է <http://diariolaley.laley.es> հղումով: Տե՛ս նաև Մար Զիմենո Բուլնես, 2017 թ., Քրեական դատավարության ընթացքում հետախուզության տեղեկությունների օգտագործումը. մարտահրավեր պաշտպանության իրավունքներին եվրոպական և իսպանական համատեքստում, Եվրոպական քրեական օրենքի նոր հանդես, հատոր 8, No. 2, հունիս, էջ 171-191:

<sup>56</sup> Տե՛ս Ալոնսո Ռ. Պենա Կարերա Ֆրեյե, 2013 թ., 'El Derecho penal del enemigo y su influencia en la legislación penal', Jueces para la democracia, No. 77, էջ 49-72, Տե՛ս նաև Զ. Ուոքեր, 2010, «Հանրության մոբիլիզացումը ահաբեկչության դեմ պայքարի համար. դեպի ավելի ապահով համայնքներ, թե՛ ոստիկանական պետություն», Քրեական իրավունքի հանդես, No. 6, Մար Զիմենո Բուլնես, 2017 թ., Քրեական դատավարության ընթացքում հետախուզության տեղեկությունների օգտագործումը. մարտահրավեր պաշտպանության իրավունքներին եվրոպական և իսպանական համատեքստում, Եվրոպական քրեական օրենքի նոր հանդես, հատոր 8, No. 2, հունիս, էջ 171-191:

<sup>57</sup> Գերագույն դատարան, հասանելի է <http://www.poderjudicial.es/search/index.jsp> հղումով: Տե՛ս նաև Մար Զիմենո Բուլնես, 2017 թ., Քրեական դատավարության ընթացքում հետախուզության տեղեկությունների օգտագործումը. մարտահրավեր պաշտպանության իրավունքներին եվրոպական և իսպանական համատեքստում, Եվրոպական քրեական օրենքի նոր հանդես, հատոր 8, No. 2, հունիս, էջ 171-191:

<sup>58</sup> Ibid.

<sup>59</sup> Արդարության և անվտանգության մասին ակտ, հասանելի է [www.legislation.gov.uk/ukpga/2013/18/contents/enacted/data.htm](http://www.legislation.gov.uk/ukpga/2013/18/contents/enacted/data.htm) հղումով:

Հատուկ իմիգրացիոն դիմումների հանձնաժողովի մասին ակտով<sup>60</sup>, որը կառավարությանը թույլ տվեց հիմնվել փակ նյութերի վրա՝ արդարացնելու ազգային անվտանգության հիմքով իրականացվող դեպորտացիան: Զրեական իրավունքից բացի փակ նյութերով դատավարությունները հնարավոր են նաև ստորև ներկայացվող դեպքերում<sup>61</sup>.

- Ահաբեկչության և հանցավորության դեմ պայքարի և անվտանգության մասին 2001 թվականի ակտ<sup>62</sup>, որը թեև այլևս ուժի մեջ չէ, սակայն թույլ էր տալիս այլ երկրների քաղաքացիների մշտական կալանավորումը ահաբեկչության կասկածի դեպքում:
- Ահաբեկչության կանխարգելման 2005 թվականի ակտը<sup>63</sup> և Ահաբեկչության կանխարգելման և հետաքննական միջոցների մասին 2011 թվականի ակտը, որոնք թույլ էին տալիս սահմանափակող միջոցների կիրառումը այն անձանց նկատմամբ, որոնք կասկածվում են ահաբեկչությանը ներգրավվածության մեջ:
- Ահաբեկչության դեմ 2008 թվականի ակտը, որը ՄԹ Գանձապետարանին հնարավորություն է տալիս չբացահայտելու որևէ նյութ, եթե դա հակասում է հանրային շահերին<sup>64</sup>, և
- Արդարադատության և անվտանգության մասին 2013 թվականի ակտը, որը փակ նյութերով դատավարության օգտագործումը տարածում է հիմնական քաղաքացիական դատարանների վրա, օրինակ՝ արտահանձնումներին և խոշտանգումներին առնչվող վնասի հատուցման գործերի քննության համար<sup>65</sup>:

Փակ նյութերով դատավարությունների ընթացքում, եթե թույլատրվում է, ապացույցները կարող են ենթակա լինել խաչաձև հարցաքննության հատուկ փաստաբանի կողմից, որը հատուկ նշանակված փաստաբան է, ով զբաղվում է անվտանգությանը վերաբերող դասակարգված տեղեկություններ ներառող գործերով և ունի հանձնարարական՝ ներկայացնելու որևէ անձի՝ տվյալ անձից և/կամ նրա սովորական իրավաբաններից գաղտնի պահվող նյութերին առնչվող շահերը: Դատարանը միշտ որոշում է կայացնում ապացույցների՝ ատենակալների կողմից դատավարության ընթացքում ընդունելի լինելու վերաբերյալ<sup>66</sup>: Երկրորդ՝ դատավարության ընթացքում անանուն վկայությունների օգտագործման վերաբերյալ Թագավորական դատախազության ծառայությունը թույլ է տալիս հետախուզության պաշտոնյաներին վկայություն տալ պաշտպանիչ Էկրանի հետևից և որոշ դեպքերում նույնիսկ թույլ է տալիս անանունություն: Այդուհանդերձ, այս տարբերակը կարող է թույլատրվել միայն այն դեպքում, եթե դատարանը համոզված լինի, որ նման եղանակով տրված վկայությունները չեն ազդի վկայի արժանահավատության վրա և չեն խանգարի խաչաձև հարցաքննության տեղի ունենալուն: Ավելին՝ Միացյալ Թագավորությունում ընդունված է, որ նույնիսկ եթե անանուն վկաների տված վկայությունները որոշիչ դեր են խաղացել տվյալ գործի համար, դա չի ազդում վճռի ապահով լինելու վրա<sup>67</sup>: Միացյալ Թագավորությունում բոլոր պատշաճ ապացույցները սովոր-

<sup>60</sup> Իմիգրացիոն դիմումների հատուկ հանձնաժողով, հասանելի է <https://www.legislation.gov.uk/ukpga/1997/68/contents> հղումով

<sup>61</sup> Եվրոպական խորհրդարանի ներքին քաղաքականության գլխավոր տնօրենություն, Զաղաքականության բաժին, C. 2014 թ., Ազգային անվտանգությունը և գաղտնի ապացույցները օրենսդրության մեջ և դատարաններում. ուսումնասիրելով մարտահրավերները, ուսումնասիրություն Զաղաքացիական ազատությունների. արդարադատության և ներքին գործերի հանձնաժողովի համար, հասանելի է [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2014/509991/IPOL\\_STU\(2014\)509991\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2014/509991/IPOL_STU(2014)509991_EN.pdf) հղումով:

<sup>62</sup> Ահաբեկչության և հանցավորության դեմ պայքարի և անվտանգության մասին ակտ, 2001 թ., հասանելի է [www.legislation.gov.uk/ukpga/2001/24/contents](http://www.legislation.gov.uk/ukpga/2001/24/contents) հղումով:

<sup>63</sup> Ահաբեկչության կանխարգելման մասին ակտ, 2005 թ. (ուժը կորցրած է ճանաչվել), հասանելի է [www.legislation.gov.uk/ukpga/2005/2/contents](http://www.legislation.gov.uk/ukpga/2005/2/contents).

<sup>64</sup> Ibid.

<sup>65</sup> Ահաբեկչության դեմ պայքարի մասին ակտ, 2008 թ., հասանելի է [www.legislation.gov.uk/ukpga/2008/28/pdfs/ukpga\\_20080028\\_en.pdf](http://www.legislation.gov.uk/ukpga/2008/28/pdfs/ukpga_20080028_en.pdf) հղումով:

<sup>66</sup> Իրավական հանձնաժողով, No. 245, պարբերություն 3.37, Ֆիթզպատրիկ, 2002 թ., Վերանորոգում, թե՛ վերափոխում. առաջարկներ և սկզբունքներ, «Արդարությունը բոլորի համար», Ընթացիկ իրավական խնդիրների օկայն հանդես, հասանելի է <http://www.bailii.org/uk/other/journals/WebJCLI/2002/issue5/fitzpatrick5.html> հղումով:

<sup>67</sup> Տե՛ս Ռ-ն ընդդեմ Թեյլորի և Զրեբբի (1995) և Զուլփերի և Շաուբի (1994), Ռ-ն ընդդեմ Թեյլորի, Վերաքննիչ դատարանը սահմանում է ուղենիշներ՝ դատարաններին օժանդակելու համար այն գործերի դեպքում, երբ վկաների անունները գաղտնի են պահվում:



րաբար համարվում են ընդունելի, եթե դրանք չեն ընկնում բացառող կանոններից որևէ մեկի տակ՝ երրորդ կողմի հայտարարությունների հիման վրա տրված վկայություններ, հանրային շահ և հենց դատարանի՝ ապացույցները բացառելու հայեցողությունը<sup>68</sup>: Ինչ վերաբերում է վերջին կետին, նախադատական վկայությունը կարող է սկզբունքորեն ընդունվել դատարանում, եթե այն դիտարկվի որպես պատշաճ: Սակայն ըստ նախադեպային իրավունքի և Ոստիկանության և քրեական ապացույցների մասին 1984 թվականի ակտի 78-րդ բաժնի՝ դատարանը իրավասու է իր հայեցողությամբ դատավարության ընթացքից բացառելու ցանկացած ապացույց: Դատարանի՝ արդարացիության հիմքով ապացույցների բացառման հայեցողությունը վաղուց գոյություն ունեցող դատական իրավասություն է, որը հիմնված է նախադեպային իրավունքի վրա<sup>69</sup>:

Յետախուզության՝ խիստ զգայուն տեղեկությունների ներկայացումը կարող է դատարանի որոշմամբ ենթակա չլինել բացահայտման պահանջին՝ պայմանավորված հանրային, այլ ոչ թե հետախուզության պաշտոնյայի շահերով: Ինչպես բացատրվում է Եվրոպական խորհրդարանի Զաղաքացիական ազատությունների, արդարադատության և ներքին գործերի հանձնաժողովի պատվիրած ուսումնասիրության մեջ, անկախ այն հանգամանքից, որ Միացյալ Թագավորությունն ունի դատարաններում գաղտնի ապացույցների օգտագործման արտակարգ ընթացակարգեր, «հետախուզության համայնքների տրամադրած ազգային անվտանգության նկատառումներով գաղտնի պահվող և պաշտպանվող կողմի համար չբացահայտվող տեղեկությունների և նյութերի օգտագործումը առաջացնում է քննարկումներ արդար դատավարության, հավասար պաշտպանության և հիմնարար ազատությունների տեսանկյունից: Այն նաև բարձրացնում է կարևոր հարցեր, որոնց կապված են հետախուզական համայնքներում փոփոխվող պրակտիկաների և այդ ծառայությունների տրամադրած նյութերի՝ դատական մարմինների կողմից պատշաճ ստուգման աստիճանի հետ»<sup>70</sup>:

Սակայն, անկախ հետախուզության հավաքած ապացույցների օգտագործման վերաբերյալ ընդարձակ սահմանափակող իրավական դրկտրինների գոյության հանգամանքից, ներքին և միջազգային ահաբեկչության աճով պայմանավորված, պետությունները պետք է ունենան թիրախային մեխանիզմներ, որոնք թույլ կտան իրականացնել հետախուզական տեղեկությունների փոխանակում հետախուզության և իրավապահ մարմինների միջև: Յետախուզական տեղեկությունները պետք է օգտագործվեն քրեական հետաքննությունների և հետապնդումների ժամանակ այնպիսի եղանակով, որը համապատասխանում է օրենքի գերակայության ներքին և միջազգային պահանջներին, մասնավորապես՝ մարդու իրավունքների միջազգային պահանջներին<sup>71</sup>: Սակայն ինչպես երևում է վերը շարադրվածից, որոշ երկրների մոտեցումները հետախուզությանը պահանջում են օրենսդրական և ինստիտուցիոնալ մանրագնի բարեփոխումներ՝ արդարադատության արդյունավետությունը բարձրացնելու, հանրային շահերը պաշտպանելու և միևնույն ժամանակ ընթացակարգային իրավունքները և ազատությունները երաշխավորելու համար:

<sup>68</sup> Ըստ 1988 թ. Քրեական արդարադատության ակտի՝ դատարանը պետք է դատական հայեցողություն ցուցաբերի՝ պայմանավորված արդարադատության շահերով նախքան երրորդ կողմից հայտարարության հիման վրա տրված վկայությունների՝ որպես ապացույց ընդունումը:

<sup>69</sup> Ը. Ուոքեր, 2004 թ., Ահաբեկչությունը և քրեական արդարադատությունը. անցյալը, ներկան և ապագան, Քրեական իրավունքի հանդես, 50-րդ հոբեյանական հավելված, էջ 315:

<sup>70</sup> Եվրոպական խորհրդարանի Ներքին քաղաքականության գլխավոր տնօրենություն, Զաղաքակալության բաժին, 2014 թ., Ազգային անվտանգությունը և գաղտնի ապացույցները օրենսդրության մեջ և դատարաններում. ուսումնասիրելով մարտահրավերները, ուսումնասիրություն Զաղաքացիական ազատությունների, արդարադատության և ներքին գործերի հանձնաժողովի համար, հասանելի է [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2014/509991/IPOL\\_STU\(2014\)509991\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2014/509991/IPOL_STU(2014)509991_EN.pdf) հղումով:

<sup>71</sup> Քրեական արդարադատության ոլորտում ահաբեկչության դեմ արդյունավետ պայքարի դրական փորձի Ռաբաթի հուշագիր, հասանելի է <https://www.thegctf.org/Portals/1/Documents/Framework%20Documents/2016%20and%20before/GCTF-Ra-bat-Memorandum-ENG.pdf?ver=2016-09-01-115828-653> հղումով:

**Միացյալ Նահանգներում** 9/11-ի դեպքերը զգալիորեն փոփոխել են մոտեցումը ահաբեկչությանն առնչվող իրավախախտումների նկատմամբ՝ շեղելով հարացույցը սովորական քրեական արդարադատության համակարգից դեպի արտակարգ մոդել, որը հիմնված է ազգային անվտանգության շահերի վրա<sup>72</sup>:

Հետախուզության և քրեական իրավապահության տարանջատումը Միացյալ Նահանգներում այդքան խիստ չէ, որքան Եվրոպայում: Թե՛ հետախուզությունը, թե՛ քրեական հետաքննությունները սովորաբար կիրառվում են որպես ահաբեկչության դեմ պայքարի կանխարգելիչ ռազմավարություններ: Այդուհանդերձ, տեղեկությունները սովորաբար չեն փոխանակվում ո՛չ հետախուզության համայնքի ներսում, ո՛չ իրավապահ մարմինների հետ: Դասակարգված տեղեկատվության ընթացակարգերի մասին ակտը<sup>73</sup> կարգավորում է դասակարգված տեղեկատվության օգտագործումը սովորական քրեական դատավարությունների ընթացքում<sup>74</sup>: Այն երկու կողմերի համար էլ սահմանում է դասակարգված տեղեկատվության միակողմանի օգտագործման ընթացակարգեր: 9/11-ի դեպքերից հետո Արտաքին հետախուզական ծառայության մասին ակտը<sup>75</sup> ևս մեկ անգամ կարևորություն ստացավ, քանի որ այդ ակտի՝ նախկինում մերժված դրույթներն ընդունվեցին ԱՄՆ Հայրենասիրության ակտով<sup>76</sup>:

Ի հավելումս սրա՝ կալանավորների նկատմամբ վերաբերմունքի մասին 2005 թվականի ակտը և Ռազմական հանձնաժողովների մասին 2006 թվականի ակտը<sup>77</sup> նույնպես ներառում են հետախուզության, հետապնդման և դատավարության ընթացակարգերի այլընտրանքային մոտեցում: Այս օրենսդրական ակտերը բարելավել են տեղեկատվության փոխանակումը իրավապահ մարմինների և հետախուզական համայնքի միջև և բացել են Նոր հնարավորություններ քրեական գործերի շրջանակներում գաղտնի ընթացակարգերի և հետախուզական տեղեկությունների (որոնք ընդհանուր առմամբ դասակարգվում են որպես ապացույցներ) օգտագործման համար: Հետաքննչական իրավասությունները զգալիորեն ընդլայնվել են, ինչպես նաև ընդլայնվել են այդ իրավասությունների օգտագործման հիմքերը: Ավելին՝ այժմ հնարավոր է զգալիորեն սահմանափակել պաշտպանվող կողմի իրավունքները՝ պայմանավորված ազգային անվտանգության շահերով:

Այդուհանդերձ, դատական համակարգը այդ սահմանափակումների նկատմամբ դեռևս սահմանում է խիստ պահանջներ, և պատշաճ ընթացակարգի սկզբունքը զգալիորեն ամրապնդվում է<sup>78</sup>: Անկախ ձեռք բերված ապացույցներից՝ ցանկացած դասակարգված ապացույց սովորաբար մանրազնին կերպով ուսումնասիրվում է դատավորների կողմից:

<sup>72</sup> Տե՛ս Ֆրեդ Մանգեթ, 2006 թ., Հետախուզությունը և քրեական օրենսդրության համակարգը, Սթենֆորդի իրավունքի և քաղաքականության հանդես, հատոր 17, էջ 415-436:

<sup>73</sup> Դասակարգված տեղեկատվության ընթացակարգերի ակտ (CIPA), հասանելի է <https://www.justice.gov/archives/jm/criminal-resource-manual-2054-synopsis-classified-information-procedures-act-cipa> հղումով:

<sup>74</sup> Տե՛ս ԱՄՆ-ը ընդդեմ Թրուսոնգ Դինս Զոնգի, որտեղ ուսումնասիրվում է Դասակարգված տեղեկատվության ընթացակարգերի մասին ակտի՝ առաջնային նպատակի ստուգման կարևորությունը հետախուզական տեղեկությունների հավաքման և դատարանում ներկայացման տեսանկյունից: Դատարանը եզրահանգեց, որ քանի դեռ հսկողության իրականացման առաջնային նպատակը եղել է այլ պետության գործողությունների վերաբերյալ ազգային անվտանգությանն առնչվող տեղեկությունների հավաքումը, հավաքված տեղեկությունները կարող են օգտագործվել քրեական գործի շրջանակում:

<sup>75</sup> Հայրենասիրության ակտը բացահայտ կերպով իրավասություն տվեց իրավապահ մարմիններին հետախուզական համայնքին տրամադրելու ցանկացած արտաքին հետախուզական տեղեկություն, որը համապատասխանում է ատենակալների դատավարության 6(e) կանոնին կամ III Հիմքի պահանջներին՝ Էլեկտրոնային, հեռագրային կամ բանավոր գաղտնալսման տեղեկություններ, որոնք հավաքվել են քրեական հետաքննության շրջանակում:

<sup>76</sup> Տեյմս Մաքձդամս, III Արտաքին հետախուզական ծառայության ակտ (FISA), (ընթերցվել է 25 սեպտեմբերի, 2021 թ.), հասանելի է [https://www.fletc.gov/sites/default/files/imported\\_files/training/programs/legal-division/downloads/arti-cles-and-faqs/research-by-subject/miscellaneous/ForeignIntelligenceSurveillanceAct.pdf](https://www.fletc.gov/sites/default/files/imported_files/training/programs/legal-division/downloads/arti-cles-and-faqs/research-by-subject/miscellaneous/ForeignIntelligenceSurveillanceAct.pdf) հղումով:

<sup>77</sup> Ռազմական հանձնաժողովների մասին ակտի առաջնային նպատակն էր «թույլատրել Ռազմական հանձնաժողովների կողմից դատավարությունների իրականացումը՝ պատերազմի օրենքների խախտումներին վերաբերող գործերի համար»: Ակտը ընդունվել է Կոնգրեսի կողմից և մշակվել է անմիջապես ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից ընդունված Համդանս ընդդեմ Ռամսֆիլդի գործի վճռից հետո 2006 թ. (Գերագույն դատարանի կարծիքը Համդանս ընդդեմ Ռամսֆիլդի գործով):

<sup>78</sup> Տե՛ս Բոմբիսոլսկի, 2015 թ., Magna Carta Libertatum ազդեցությունը օրենքի գերակայության սկզբունքի զարգացման վրա, SEEU հանդես, հատուկ թողարկում, հատոր 11, մաս 1:



## Վերջաբան

Եվրոպական երկրներն իհարկե գրանցել են զգալի առաջընթաց քրեական արդարադատության իրենց համակարգերում՝ արձագանքելով ահաբեկչության դեմ պայքարի հարացույցի փոփոխություններին և փոփոխելով քրեական օրենսդրության նպատակները, Էուլթյունը և գործիքները: Այնուամենայնիվ, պետությունները դեռևս շարունակում են փնտրել հետախուզության տեղեկությունների՝ դատարանում օգտագործման պատշաճ մոդելը, այնպիսի մոդել, որը կգտնի հավասարակշռություն արդար դատավարության երաշխիքների և հատուկ շահերի պաշտպանության միջև (ինչպիսիք են ազգային անվտանգության և հանրային կարգի պաշտպանության շահերը)՝ միևնույն ժամանակ համապատասխանելով ՄԻԵԴ-ի և ԵԱԴ-ի չափանիշներին և սկզբունքներին:

Որոշ երկրներ դատավարության փուլի ընթացքում կիրառում են միջոցներ՝ վկայի կամ հետախուզության պաշտոնյայի ինքնությունը պաշտպանելու համար՝ թույլ տալով դատարանին և պաշտպանության իրավաբաններին իրականացնել հարցաքննություն Էկրանի հետևից և ապահովելով անանունությունը: Այլ երկրներ, ինչպես, օրինակ Նիդերլանդները, հետախուզության հավաքած տեղեկությունների ընդունելիության հարցում որդեգրել են այլ մոտեցում և չեն արգելում նման տեղեկությունների օգտագործումը դատարանում: Միացյալ Թագավորության ուժեղ դատական վերահսկողությունը և այդպիսի տեղեկության գնահատումը դրական օրինակ են, թե ինչպես կարելի է ապահովել հստակ հավասարակշռություն հանրային անվտանգության շահերի և պաշտպանության իրավունքի միջև՝ թույլ տալով, որ հետախուզության հավաքած տեղեկությունները դասակարգվեն որպես զգայուն տեղեկություններ՝ մեղադրվող կողմին չզրկելով փակ կյուրթերով դատավարության ընթացքում հատուկ փաստաբանի կողմից ներկայացվածության: Անկախ հատուկ փաստաբանների մոտեցման նկատմամբ հակազդեցությունից՝ առնվազն ներկա է իրավաբան, ով դատավարության ընթացքում հակադրվում է հետախուզության պաշտոնյային:

Յուրաքանչյուր պետություն պետք է գտնի իրեն համապատասխան մեթոդները՝ հետախուզության հավաքած ապացույցները դատավարությունների ընթացքում ընդունելու համար՝ իր իրավական ավանդույթներին և պրակտիկային համապատասխան: Այնուամենայնիվ, բոլոր օրենքները պետք է համապատասխանեն ՄԻԵԿ-ի արդար դատավարության երեք հիմնական չափանիշներին: Ցանկացած իրավական լուծում պետք է երաշխավորի, որ (ա) հատուկ միջոցներն օգտագործվել են միայն որպես վերջին միջոց, (բ) պաշտպանությունը հնարավորություն է ունեցել ուսումնասիրելու ապացույցները և հարցաքննելու վկաներին, (գ) դատավարության դատավորները հնարավորություն են ունեցել ուսումնասիրելու ապացույցները և ապահովելու արդար դատավարություն:

Ի վերջո, անկախ վկաների պաշտպանության կամ ահաբեկչության դեմ պայքարի համար իրականացված միջոցներից, ընտրված մոդելը որևէ պարագայում չպետք է խախտի քրեական դատավարության իրավունքները:

Ապացույցների դատական գնահատման տեսանկյունից, սակայն, ՄԻԵԿ-ի իրավագիտությունը հստակ սահմանում է, որ ՄԻԵԿ-ի վճիռների կայացման նպատակով դատարանը գնահատում է, թե արդյոք քրեական դատավարությունն ընդհանուր առմամբ արդար է եղել: Այս համատեքստում հետախուզության կողմից հեռահաղորդակցությունների գաղտնալսման կամ քաղաքացիների անձնական կյանքի իրավունքի խախտման միջոցով հավաքված ապացույցները ավտոմատ կերպով չեն հանգեցնում այն կանխավարկածին, որ հատուկ հետաքննչական միջոցների կիրառման ընթացակարգը նրանց նկատմամբ եղել է անարդար:

Այսպիսի հանգամանքներում դատարանը կիրառում է համաչափության ստուգումը՝ որոշելու համար, թե արդյոք երկրի ներքին օրենքով, սահմանադրությամբ կամ համաձայնագրով երաշխավորված տվյալ իրավունքի խախտումը կարող է արդարացված լինել: Ինչ վերաբերում է 8-րդ հոդվածին, մեկնաբանման թույլատրելիության սահմանները կարող են տարբեր լինել տարբեր հանգամանքներում՝ կախված գործից և դրա նախադրյալ-

Ներից: Որոշումը հիմնվում է հանգամանքների երկու խմբերի վրա՝ (1) արդյոք տվյալ իրավունքի խախտումը արդարացված, անհրաժեշտ և համաչափ է հանրային շահին, (2) արդյոք պետությունը ձեռնարկել է բավարար միջոցներ իր պարտավորությունները կատարելու համար:

Կոնվենցիայի խախտման բնույթի ուսումնասիրության ընթացքում դատարանն ուսումնասիրում է, թե արդյոք 8-րդ հոդվածի (անձնական կյանք) խախտմամբ հավաքված հետախուզության տեղեկությունների օգտագործումը որպես ապացույց դատավարությունը դարձնում է անարդար, և արդյոք դա հակասում է 6-րդ հոդվածին (արդար դատավարություն)՝ հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները: Դատարանը գնահատում է նաև, թե արդյոք հարգվել է դիմորդի՝ պաշտպանության իրավունքը, ինչպես նաև ուսումնասիրում է ներկայացված ապացույցների որակը և կարևորությունը (այն է՝ դրանց համապատասխանությունը քրեական արդարադատության շահերին):

Անձնական կյանքի իրավունքի համատեքստում դատարանը մի քանի անգամ հաստատել է, որ այս իրավունքն ունի երկրորդական կարևորություն արդար դատավարության իրավունքի և հանրային շահերի պաշտպանության սկզբունքի համեմատությամբ, որոնք միշտ առաջնահերթ են: Այդպիսով՝ ընթացակարգային օրենքների և դրանց առնչվող այլ իրավական լուծումների բարեփոխումները պետք է ներառեն հանրային շահը՝ որպես չափանիշ քրեական դատավարություններում հետախուզության հավաքած ապացույցների գնահատման համար:

Այս հավելումը հնարավոր կդարձնի հեշտությամբ սահմանել անձնական կյանքի իրավունքի խախտման կարևորությունը հատկապես այն դեպքերում, երբ ապացույցները կապված են հանցագործության իրականացման հետ: Ուստի հետախուզության հավաքած ապացույցները, որոնք ապացուցում են ահաբեկչության հետ կապված հանցագործությունների պլանավորումը կամ իրականացումը այն անձանց կողմից, ովքեր ցանկանում են խախտել հանրային կարգը, պետք է օգտագործվեն որպես ապացույց դատարանում քրեական դատավարության ընթացքում:

Ինչպես արդեն ներկայացվել է, հետախուզության հավաքած ապացույցները կարգավորող քրեական դատավարության մասին օրենքների մեծ մասը շեշտում է այդ ապացույցների ձեռքբերման եղանակները, այլ ոչ թե տվյալ ապացույցների՝ արդարադատության շահերից բխելու հանգամանքը: Ապագա օրենսդրական բարեփոխումներ մշակելիս հանրային շահերի պաշտպանության և մեղադրվող կողմի իրավունքների պաշտպանության նպատակով օրենսդիրները պետք է հիմնականում հաշվի առնեն գերմանական դոկտրինի՝ «չափման կամ հավասարակշռման» մոտեցումները՝ կիրառելով «համաչափության ստուգում», որը որոշ դեպքերում ընդունում է հետախուզական ծառայությունների հավաքած ապացույցները, սակայն միևնույն ժամանակ նաև ապահովում է պաշտպանվող կողմի մարդու իրավունքների բավարար պաշտպանություն:

Համաչափության ստուգման կիրառման և քրեական դատավարության ընթացքում ճշմարտության բացահայտման համար կարող են մշակվել տարբեր լուծումներ՝ ընդլայնելով ընդունելի ապացույցները կարգավորող կանոնները: Ցանկացած պարագայում անձնական կյանքի իրավունքը և սեփական անձի նկատմամբ ինքնամեղադրանք չներկայացնելու արտոնությունը չեն բացառում հեռահաղորդակցությունների չարտոնված գաղտնալսման օգտագործումը: Մարդու իրավունքները, որոնք լայնորեն ընդունված են ժամանակակից իրավական համակարգերում, չեն ներառում ընդհանուր արգելք, որը կկանխի պաշտպանվող կողմի արած որոշ հայտարարությունների՝ իր դեմ օգտագործումը:



**DCAF** Geneva Centre  
for Security Sector  
Governance

DCAF ժնկյան կենտրոնի  
գլխավոր գրասենյակ

Մեզոն դե լա Պե  
Յուժեն-Ռիգո փողոց 2E  
CH-1202 ժնև, Շվեյցարիա

✉ [info@dcaf.ch](mailto:info@dcaf.ch)  
☎ +41 (0) 22 730 9400

---

[www.dcaf.ch](http://www.dcaf.ch)

---

🐦 [@DCAF\\_Geneva](https://twitter.com/DCAF_Geneva)